



Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության
 հայկական կենտրոն հասարակական կազմակերպության
 Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղ

**ԱՌՑԱՆՑ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
 ՓԵՏՐՎԱՐ-2022,**

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

28.02.2022

Կառավարության ծրագրի համաձայն՝ նախորդող ժամանակահատվածում իրականացված փաստագրման արդյունքների հիման վրա շարունակվում են երկրաշարժից հետո տեղադրված (կառուցված) ոչ հիմնական շինությունների (տնակների) հիմնախնդրի կանոնակարգման աշխատանքները:

Այդ գործընթացի շրջանակներում ՀՀ քաղաքաշինության կոմիտում կայացել է ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի հանդիպումը: Կոմիտեի համակարգմամբ գործող այս աշխատանքային խմբի կազմում ընդգրկված են պետական կառավարման համակարգի մարմինների, ՀՀ Շիրակի, Լոռու, Արագածոտնի մարզպետարանների, համայնքապետարանների ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպություններ:

Շիրակի մարզից աշխատանքային խմբում են Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Խաչատուր Խնձրցյանը, «Ասպարեզ» ակումբ ՀԿ-ի խորհրդի նախագահ Լևոն Բարսեղյանը, «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Շավարշ Արամյանը:

Հանդիպման ժամանակ ներկայացվել են հիմնախնդրի կանոնակարգման ուղղությամբ նախորդող ժամանակահատվածում իրականացված աշխատանքները, տնակների և դրանցում բնակվող ընտանիքների կարգավիճակի գնահատման արդյունքները: Նախանշվել են տնակներում բնակվող ընտանիքների վերաբնակեցման և տարածքների ազատման մասով նախնական մոտեցումները և առաջնահերթությունները, ինչպես նաև դրանց հիման վրա անհրաժեշտ ֆինանսական նախնական հաշվարկների հետ կապված հարցերը:

ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսվում է խնդրի կանոնակարգման նպատակով ստեղծել իրավական հիմքեր, իրականացնել տնակների հեռացման՝ տարածքների ազատման, այդ տնակներում բնակվող ընտանիքների մասով վերաբնակեցման աշխատանքներ: Կառավարության կողմից սահմանված մոտեցումների համաձայն՝ սկզբնական փուլում դիտարկելով պետական և համայնքային հողամասերի վրա տեղադրված տնակները:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

1 February, 15:37

Մեզ համար համագործակցության ամրապնդումն առաջնային է, կարծում են՝ ավելի տեսանելի պետք է դարձնենք այն համագործակցության շրջանակը, որ կար մինչ այժմ: Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանն այսօր ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինին:

Ողջունելով դեսպանին և Գյումրիում ՌԴ գլխավոր հյուպատոս Ռուսլան Կանդաուրովին՝ մարզպետն անդրադարձել է մինչ այժմ իրականացված ծրագրերին՝ ընդգծելով դրանց խորացման ու ընդլայնման կարևորությունը: «Մեծարգո պարոն դեսպան, բարով էք եկել Շիրակի մարզ: Այս տարի նշում ենք հայ-ռուսական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյա հոբելյանը և այս համատեքստում կարծում են՝ ներկա մեր օրակարգով քննարկելու բազմաթիվ հարցեր կունենանք, որոնք կվերաբերեն տարբեր ոլորտների: Տարին հոբելյանական է և անելիքներն ու նախաձեռնությունները, վստահաբար, միտված են լինելու մեր դարավոր բարեկամության ամրապնդմանը»:

Սերգեյ Կոպիրկինը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար և նշել, որ ուրախալի է, երբ տեսնում է արդեն հաստատված հարաբերությունների խորացմանը միտված նախաձեռնողականություն: «Հարգարժան տիկին մարզպետ, նախ թույլ տվեք ձեզ մաղթել հաջողություններ այս աշխատանքում և նշել, որ անչափ գնահատելի է ձեր մոտեցումը և արդեն նախանշված բարեկամության ու համագործակցության խորացման համար պատրաստակամությունը: Մենք ևս շահագրգիռ ենք խորացնել փոխգործակցությունը և օգտագործել այն ներուժը, որ առկա է մեր հարաբերություններում»:

Շիրակի մարզպետն անդրադառնալով հայ-ռուսական ռազմավարական համագործակցությանը՝ կարևորել է ռուսական կողմի աջակցությունը հետպատերազմյան ժամանակաշրջանում՝ ընդգծելով խաղաղապահ գործերի միջնորդությունը գերիների վերադարձման գործում, միաժամանակ անդրադառնալով շիրակցի գերիների հայրենադարձման խնդրին:

Կողմերը խոսել են նաև հայ-ռուսական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին նվիրված միջոցառումների մասին: Մարզպետը նշել է, որ նախատեսվում է անցկացնել հայ-ռուսական բարեկամության օրեր, որոնց շրջանակում տարատեսակ ծրագրեր կիրականացվեն, բաց դռների օրեր կլինեն ռազմաբազայում, կլինեն նաև փոխադարձ այցելություններ և այլ նախաձեռնություններ:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

2 February, 09:38

Հանդիպման հրավեր

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հարգելի՛ ներկայացուցիչներ, կարևորելով պետության կառավարման գործում քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը, հրավիրում եմ ոլորտի ներկայացուցիչներին բաց ձևաչափով հանդիպման:

Որպես հանդիպման արդյունք՝ նախատեսվում է ձևավորել առաջարկություններ և հստակեցնել հետագա քայլեր՝ ուղղված քաղհասարակություն-կառավարություն արդյունավետ երկխոսությանը մարզային մակարդակում:

Հարգանքով՝ Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյան

Հանդիպումը տեղի կունենա փետրվարի 9-ին՝ ժամը 11:00-ին, Շիրակի մարզպետարանի վարչական շենքում:

Ձեր մասնակցությունը հաստատելու համար զանգահարել 093621822 հեռախոսահամարով մինչև փետրվարի 7-ը:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

7 February, 11:46

Փետրվարի 1-ից 6-ը Շիրակի մարզում լույս աշխարհ է եկել 37 երեխա՝ 20 տղա, 17 աղջիկ:

Հունվար ամսին Շիրակի մարզում ծնվել է 203 երեխա՝ 112 տղա, 91 աղջիկ: Ծնունդներից չորսը զույգ է եղել:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

8 February, 11:58

Հասարակական կազմակերպությունների հարգելի՛ ներկայացուցիչներ, հաշվի առնելով կորոնավիրուսի (COVID-19) ցուցանիշների աճը, Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանի հետ փետրվարի 9-ին կայանալիք հանդիպումը հետաձգվում է մեկ շաբաթով:

Հանդպումը կկայանա փետրվարի 16-ին ժամը 11:00-ին, Շիրակի մարզպետարանի վարչական շենքում:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

9 February, 11:03

Տեղեկացնում ենք, որ 2022 թվականի փետրվարի 1-ից մեկնարկել է «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագիրը, որի նպատակն է գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմների հստակեցումը և ամբողջական համակարգի ներդրման արդյունքում գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի կառավարմանն ուղղված քաղաքականության իրականացումը: Ծրագրով ապահովագրավճարի չափը կաուբսիդավորվի 50-60 տոկոս:

Ապահովագրական պայմանագրեր կնքելու ժամկետներին և ծրագրին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով

<https://mineconomy.am/page/1452...>

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

10 February, 15:23

Շիրակի մարզպետարանն ու ՄԱԶՕ Շիրակի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնը համատեղ փետրվարի 26-ին Մեծ Սարիար բնակավայրի անտառային հատվածում կանցկացնեն ամենամյա «Շիրակի Ձմեռ» փառատոնը:

Շիրակի մարզպետի տեղակալ Կարեն Մանուկյանն ու Շիրակի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնի համակարգող Նաիրա Գրիգորյանը համատեղ ասուլիսի ընթացքում ներկայացրել են միջոցառման մանրամասները: Մարզպետի տեղակալ Կարեն Մանուկյանը՝ կարևորելով մարզում ձմեռային տուրիզմի զարգացումը նշել է, որ արդեն ավանդույթ է դարձել մարզում «Շիրակի Ձմեռ» փառատոնի անցկացումը տարբեր համայնքներում, որի նպատակը մարզի բնակչության ակտիվ հանգիստը և հետաքրքիր ժամանցն ապահովելն է: Միջոցառումը բաղկացած է լինելու սպորտային, ժամանցային, մշակութային հատվածներից, անցկացվելու են դահուկավազքի, լեռնադահուկի, սնունդային, կայտբորդինգի, սնոուբորդի, բազկամարտի, պարանի ձգման, հրաձգության, ռաֆտինգի, փեյնթբոլի, ձնեմարտի (սիրողական), ջիֆինգի, սահնակների, արագընթացների (բուռաններ) մրցումներ, լինելու է համերգային հետաքրքիր ծրագիր:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

11 February, 16:13

ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանության, ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության, Շիրակի մարզպետարանի, ինչպես նաև Էմիրական Կարմիր մահիկ բարեգործական կազմակերպության համատեղ ջանքերով, այսօր մեկնարկել է «Ձմեռակացի բարեգործական ծրագիրը»: Միջոցառմանը մասնակցել են Շիրակի մարզային իշխանության ներկայացուցիչները՝ մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանի գլխավորությամբ, ՀՀ-ում ԱՄԷ դեսպանության գործերի հավատարմատար Ալիամ Ռաշիդ ալ Սալամին, Էմիրական Կարմիր մահիկ կազմակերպության ներկայացուցիչ Մուհամմադ ալ Յամային:

Ալբերտ Այվազյանը Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանի անունից ողջունել է ներկաներին և շնորհակալություն հայտնել մարզում սոցիալական այսպիսի կարևոր ծրագիր իրականացնելու համար, նշել, որ ծրագրի շրջանակներում մարզի անապահով շուրջ 1281 ընտանիքների կտրամադրվի աջակցություն ջեռուցման, մասնավորապես, Էլեկտրաէներգիայի սպառման ծախսերը հոգալու նպատակով, այդ թվում երեք և ավելի անչափահաս երեխաներ ունեցող 189 ընտանիքի, ընդհանուր առմամբ, 628 երեխայի ձմեռային հագուստ և անկողնային պարագաներ:

Նշենք որ, ծրագրից օգտվելու են Շիրակի մարզի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 20.00-ից բարձր անապահովության միավոր ունեցող, ժամանակավոր շինություններում բնակվող 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքները:

Հանդիպման ավարտին պատասխանատուները շրջել են նաև մի քանի տնակային ավաններում:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

14 February, 12:22 ·

Նախորդ օրը երեկոյան տեղի ունեցած երկրաշարժի հետևանքների, հետագա անելիքների և աշխատանքների համակարգման նպատակով այսօր Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանի գլխավորությամբ տեղի է ունեցել քննարկում, որին մասնակցել են մարզային իշխանության ներկայացուցիչներն ու պատասխանատու կառույցների ղեկավարները:

«Մեյմիկ պաշտպանության տարածքային ծառայության» շյուսիսային տարածաշրջանային կենտրոնի և ԱԻՆ Փրկարար ծառայության Շիրակի մարզային կառույցի ղեկավարները ներկայացրել են երկրաշարժից հետո արձանագարված հետցնցումների և գրանցված ահազանգերի մասին տեղեկատվություն՝ փաստելով, որ փրկումների և վնասների մասին ահազանգեր չեն արձանագրվել: Երկրաշարժը Շիրակի մարզում մեծ ուժգնությամբ զգացվել է Գյումրիում՝ բնակելի շենքերում, ինչպես նաև Աշոցքի տարածաշրջանում:

Ըստ «Գյումրու շտապ բուժօգնության կայան»-ի տնօրենի զեկույցի, զանգերի թիվն աճել է ցնցումներից հետո, որն հիմնականում պայմանավորված է եղել մարդկանց սթրեսային վիճակով և վախով: 22.25-ից մինչև ժամը մեկն արձանագրվել է 28 կանչ:

Շիրակի մարզպետը հորդորել է պատասխանատուներին լինել աչալուրջ և տեղեկատվության փոխանակման առումով՝ առավել օպերատիվ:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

14 February, 12:48 ·

Շիրակի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհաստատություններում փետրվարի 7-13-ը գրանցվել է 36 ծնունդ՝ 22 տղա, 14 աղջիկ:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

14 February, 15:59 ·

Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանն ու Գյումրիի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանն այսօր ընդունել են Ուզբեկստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Արամ Գրիգորյանին:

Հանդիպման ժամանակ քննարկվել և նախնական պայմանավորվածություն է ձեռքբերվել Գյումրիի և Սամարղանդ քաղաքները քույր քաղաքներ հռչակելու մասին:

Համաձայնագրով կողմերը կգործակցեն տնտեսության, մշակույթի, պատմամշակութային ժառանգության պահպանման, զբոսաշրջության բնագավառներում:

«Լիահույս եմ, որ Հայաստանի և Ուզբեկստանի միջև արդեն ձևավորված բարիդրացիական ու գործընկերական կապերն առավել կամրապնդվեն նաև ապակենտրոնացված մակարդակով: Գյումրին ու Սամարղանդը կկարողանան համագործակցել և այդ գործընկերությունը հիմք կհանդիսանա տնտեսական ու արդյունաբերական նոր կապերի հաստատման», - նշել է Շիրակի մարզպետը:

Կողմերը պատրաստակամություն են հայտնել անել հնարավոր բարեկամական կապերը խորացնելու և համագործակցության նոր օրակարգ ունենալու համար:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

14 February, 17:30 ·

Նախօրեի երկրաշարժի հետեւանքների ուսումնասիրման նպատակով Գյումրիում էին քաղաքաշինության կոմիտեի մասնագետները՝ նախագահ Արմեն Ղուլարյանի գլխավորությամբ: Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանի և Գյումրու համայնքապետ Վարդգես Սամսոնյանի ուղեկցությամբ պատասխանատուները շրջայց են կատարել Գյումրու վթարային շենքերում՝ երկրաշարժի հետեւանքներին տեղում ծանոթանալու և վթարայինների խնդրի լուծման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին բնակիչների հետ զրուցելու:

Պատասխանատուները եղել են Իսահակյան փողոցի 9-րդ, Անտառավան 26 և Տիգրան Մեծի 5 շենքերում: Իսահակյան 9 շենքը կառուցվել է շահագործման է հանձնվել 1930 թվականին, եռահարկ շենքն ունի 7 շքամուտք: Անտառավան 26-ը կառուցվել է 1967 թվականին, քարաշեն է, իսկ Տիգրան Մեծ 5 շենքը շահագործման է հանձնվել 1938 թվականին: Բոլոր երեք շենքերն էլ ունեն 3-րդ աստիճանի վթարայնություն:

Վթարայինների խնդիրը Շիրակի մարզպետի ուշադրության կենտրոնում է եղել դեռ ԱԺ պատգամավոր եղած Ժամանակ: Կառավարության հնգամյա ծրագրում 3-րդ և 4-րդ աստիճանի վթարային շենքերի վերակառուցման հարցն ընդգրկված է և հաստատված է տեխնիկական անբավարար վիճակում գտնվող բնակֆոնդի կանոնակարգման հայեցակարգը, ինչը նշանակում է խնդրի լուծման ուղղությամբ հստակ քայլեր են ձեռնարկվում:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

16 February, 14:19

Կարևորելով պետության կառավարման գործում քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունն ու պետական մարմինների հետ փոխգործակցությունը՝ Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանն այսօր հանդիպել է հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

«Մեզ համար հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունն աշխատանքային կարևորագույն ուղղություններից մեկն է լինելու, քանզի ինքս խիստ կարևորում եմ ձեր դերը պետական կառույցների կայացման գործում: Այն ներուժը, գիտելիքներն ու փորձը, որ ունեն մեր մարզի կազմակերպությունները, հաստատ, մեր համագործակցության արդյունքում կարող է մարզի հիմնահարցերի լուծմանը ծառայել», - նշել է Շիրակի մարզպետը:

Ծավալվել է անմիջական զրույց ու քննարկում, որի ժամանակ ՀԿ-ների ներկայացուցիչները ներկայացրել են իրականացրած ծրագրերը, որոնք հիմնականում վերաբերել են համայնքային զարգացմանը, կրթական, սոցիալական ոլորտներին:

Երկուստեք կարևորվել է նման ձևաչափով հանդիպումների կազմակերպումը, ինչը հնարավորություն է տալու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ու լուծում պահանջող հարցերին ճիշտ արձագանքել և լուծման օպտիմալ ճանապարհով շարժվել:

Անդրադարձ է եղել նաև մարզպետին կից մասնագիտական խորհուրդների ձևավորմանը, քաղհասարակության ներկայացուցիչներն հանդես են եկել առաջարկություններով:

Որպես հանդիպման արդյունք՝ նախատեսվում է քննարկված առաջարկություններից ձևավորել և մշակել քայլեր՝ ուղղված քաղհասարակություն-կառավարություն արդյունավետ երկխոսությանը մարզային մակարդակում:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

17 February, 17:26

ՀՀ կառավարության այսօրվա որշմամբ Շիրակի մարզին 1 մլրդ 619 մլն դրամ գումար է հատկացվել՝ Կապս, Արեգնադեմ, Բերդաշեն բնակավայրերում «մոդուլային» տիպի հանրակրթական դպրոցների շենքերի կառուցման նպատակով, ևս 50 մլն դրամ նախատեսվել է Բերդաշենի դպրոցը գույքով և տեխնիկայով ապահովելու նպատակին:

9 մլն 880 հազար դրամ գումար ուղղվել է Արթիկ համայնքում և Արթիկի Արևշատ բնակավայրում «մոդուլային» տիպի՝ 144-ական տեղ հզորությամբ, մուր-մանկապարտեզների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և համապատասխան համայնքներում տեղակայման համար:

Կառավարությունը 765 հազար դրամ հատկացրել է նաև Երեբոյքի տաճարի և փոքր դամբարանի թաղերի ամրակայման, Անիպեմզայի մշակույթի տան վերականգնման և փոքրիկ թանգարանի ստեղծման գիտանախագծային փաստաթղթերի կազմման և փորձաքննման համար:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

Որևէ պետական պաշտոնյա չի կարող հաջողել, եթե չի տեսնում առկա խնդիրները, չի կարևորում քաղաքացիների կողմից մատնանշված հիմնահարցերը: Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանն աշխատանքային 100 օրերն ամփոփող մամուլի ասուլիսով հանդես է եկել Արթիկ համայնքի Լեռնարկերտ բնակավայրի մշակույթի տանը, որին ներկա են գտնվել ՋԼՄ և մարզային իշխանության ներկայացուցիչները:

Մարզպետը նշել է, որ ասուլիսը հաշվետվողականության մեկ քայլ է, իսկ այն Լեռնակերտ բնակավայրում անցկացնելն ինքնանպատակ չի արվել՝ աշխատանքային մոտեցման ցուցաբերում է, որովհետև ինչպես ՀՀ կառավարությունն է միտված ապակենտրոնացված քաղաքականություն իրականացնելուն, այնպես էլ մարզում պետք է նույն ձեռագիրը պահպանել:

Այնուհետև Շիրակի մարզպետն անդրադարձել է բոլոր ոլորտներում իրականացված աշխատանքներին ու առկա հիմնախնդիրներին:

«Խոսելով մարզի խնդիրների մասին չեմ կարող չառանձնացնել մեր մարզից գերեվարված տղաների հայրենադարձման հարցին, այս պահի դրությամբ 62 հաստատված գերիները 32-ը վերադարձել են, գործընթացը շարունակվում է, հաստատված գերիների հետ հարազատները նամակագրական և հեռախոսային կապ ունեն, որն իրականացվում է «Կարմիր խաչի միջազգային ընկերության» աջակցությամբ, ամեն ինչ արվում է, որ մեր հայրենակիցներն օր առաջ վերադառնան տուն», - նշել է մարզպետը:

Ըստ Նազելի Բաղդասարյանի, մարզի խնդիրների մեջ առանձնանում է գործազրկությունը և պետք է ամեն կերպ խթանել տնտեսության զարգացմանը, այս առումով քայլեր են ձեռնարկվում, մասնավորապես, ամեն ինչ արվելու է, որ ներդրումների առումով մարզն առավել զրավիչ դառնա. «Կարծում եմ, որ մենք պետք է մեր մարզի առավելությունները շեշտադրենք: Մենք ամեն ինչ անելու ենք, որ յուրաքանչյուր համայնք կարողանա ներկայացնել իր առավելությունները: Մարզպետարանը, որպես պետական տարածքային քաղաքականություն իրականացնող և վերահսկող, փորձում է ամեն կերպ այդ ամենին նպաստել»:

Համայնքների զարգացման կարևոր ու ճկուն գործիքակազմ Շիրակի մարզպետը համարել է պետություն-համայնք համագործակցության արդյունք հանդիսացող սուբվենցիոն ծրագրերը և նշել, որ 2022-ին 44 հայտ է ներկայացվել համայնքներից ընդհանուր 7 մլրդ 229 մլն դրամի. «Շատ մանրակրկիտ ուսումնասիրել ենք և կարվի հնարավորը, որ ծրագրերը կյանքի կոչվեն: Հատկապես, որ պետությունն ամեն ինչ անում է համայնքներին աջակցելու համար: Մեծ ուշադրություն է դարձվում մանկապարտեզների, նախակրթարանների կառուցմանը, նորոգմանը՝ կֆինանսավորվի այդ ծրագրերի 70 տոկոսը: Վերանայվել է նաև սահմանամերձ համայնքների սուբվենցիոն ծրագրերի տոկոսային հարաբերությունը՝ պետական բյուջեից ֆինանսավորման չափաբաժինը 80 տոկոս է կազմում: Մեծ ուշադրություն է դարձվում դեպի արտավայրեր գնացող ճանապարհների կառուցմանը, ընդհանրապես, ճանապարհաշինությանը, լուսավորության ցանցերի անցկացմանը, մեքենասարքավորումների ձեռքբերմանը»:

Մարզպետն անդրադարձել է գյուղատնտեսությանը՝ նշելով, որ ոլորտում առկա խնդիրներն կառավարության և մարզային իշխանությունների ուշադրության կենտրոնում են, խոսքն ինչպես ռոզգման հիմնահարցի, այնպես էլ պարարտանյութերի գնի թանկացման մասին է:

Նազելի Բաղդասարյանը պատասխանել է նաև լրագրողների հարցերին, որոնք վերաբերվել են անօթևանության ու վթարայիններին, նոր ձևավորված համայնքների աշխատանքին, կադրային քաղաքականությանն ու համագործակցությանը:

Ամփոփելով ասուլիսը՝ Շիրակի մարզպետը նշել է, որ 100 օրերի ընթացքում որոշակի աշխատելաճ և ձեռագրային սկզբունքներ կարողացել է ի ցույց դնել, այսուհետև ևս շարունակելու է աշխատել նույն սկզբունքով՝ պատասխանատվությամբ ու թափանցիկ:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

Աշխատանքային գործունեության 100 օրերի ասուլիսի ավարտին Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանն այցելել է Լեռնակերտի մշակույթի տանը տեղակայված գրադարան, ծանոթացել պայմաններին, աշխատակիցներին շնորհավորել այսօր նշվող «Մայրենի լեզվի միջազգային օրվա» առթիվ: Համայնքում ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը բարձրացնելու և գիրք նվիրելու օրվա խորհրդով՝ Նազելի Բաղդասարյանը Շիրակի մարզպետարանի կողմից տարբեր ժանրերի գեղարվեստական գրականություն է նվիրել գրադարանին, անձամբ իր անունից էլ՝ գրադարանին է հանձնել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեղինակած «Երկրի հակառակ կողմը» գիրքը:

Նշենք, որ Լեռնակերտ բնակավայրի մշակույթի տան հիմնադրաման աշխատանքներն իրականացվել են տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում, որի արդյունքում կատարվել են մշակույթի տան շենքի ամրակայման, ներքին հարդարման, ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ պետական բյուջեից ծախսվել է 9 մլն 840 հազար դրամ, համայնքային բյուջեից՝ 10 մլն 923 հազար:

Մարզպետն այցելել է նաև Լեռնակերտ բնակավայրի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի, որը Հայաստանի վաղ քրիստոնեական շրջանի կառույցներից է:

Գյումրու քաղաքապետարան

Գյումրու համայնքապետարան

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. 20-110-Ն/ համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման հավելվածի 5-րդ գլխով սահմանված կարգով 2022թ. Մարտի 2-ին, ժամը՝ 12:00-ին Գյումրու համայնքապետարանի շենքում (հասցե. ք. Գյումրի, Վարդանանց հր. 1, հեռ. +374 312 3-2606), տեղի կունենա «Գյումրի քաղաքի զբոսաշրջության ենթակառուցվածքների և ճանապարհների վերակառուցում» ենթաձևագրի Հաղթանակի պողոտայի, Սբ. Ամենափրկիչ եկեղեցու հարակից այգու և հարող Աբովյան փողոցի աջ և ձախ հատվածների, Աճեմյան, Հանեսօղյան և Զիվանի փողոցների, Տերյան ու Նալբանդյան փողոցների վերականգնում բաղադրիչների նախագծի շրջակա միջավայրի վրա ակնկալվող ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում /1-ին հանրային քննարկում:

Նախագծման, հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքները իրականացվելու են «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ կողմից:

Հանրային քննարկմանը կմասնակցեն նախագծող կազմակերպության, ծրագիրը իրականացնող կազմակերպության և համայնքապետարանի ներկայացուցիչները:

Հանդիպման ընթացքում կծանոթանաք նախնական նախագծային լուծումներին, շրջակա միջավայրին սոցիալական սպասվող ազդեցություններին, հնարավորություն կունենաք բարձրաձայնելու Ձեզ հուզող հարցերը:

Covid-19 համավարակի հետևանքով ՀՀ-ում հայտարարված կարանտինի պայմանները հաշվի առնելով՝ խնդրում ենք հանդիպման ընթացքում կրել պաշտպանիչ դիմակներ և պահպանել հեռավորություն:

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ՀՏՁՀ-ի պաշտոնական կայքում՝ www.atdf.am, հեռ.՝ 010 247 123:

Գյումրու համայնքապետարան
18 February, 10:18

Սուբվենցիոն ծրագրի շրջանակներում 2022թ.-ին նախատեսվում է Գյումրիում իրականացնել բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության արդիականացման ծրագիր:

Ծրագրում ընդգրկված է 4 շենք. Պարույր Սևակ 1, Մովսես Խորենացի 42, Եղիշե Չարենց 7ա, Մուշ 2թաղ. 7/1

Ծրագրով նախատեսվում է շենքերի արտաքին պատերի ջերմամեկուսացում, շենքերի տանիքների ջերմամեկուսացում, ընդհանուր տարածքներում նոր էներգաարդյունավետ դռների և պատուհանների տեղադրում, էներգաարդյունավետ լուսավորության համակարգի տեղադրում: Ծրագրի իրականացման արդյունքում բնակարանների ջեռուցման նպատակով սպառվող էլեկտրաէներգիայի, գազի ծախսերը կկրճատվեն 30-60 %-ով:

Մովսես Խորենացի 42 շենք

Գյումրու համայնքապետարան
11 February, 10:36

Սուբվենցիոն ծրագրի շրջանակներում 2022թ.-ին նախատեսվում է հիմնանորոգել Գյումրի քաղաքի թվով 22 փողոց/փողոցի հատված:

Ցանկում ընդգրկված են փողոցներ՝ քաղաքի տարբեր հատվածներից:

Դեկաբրիստների փողոց՝ 426մ

Գյումրու համայնքապետարան
9 February, 18:16

«ԷվենտՏուրա» ընկերությունը Գյումրու համայնքի աջակցությամբ նախատեսում է սույն թվականի օգոստոսի 20-ին կազմակերպել և իրականացնել «Գարեջրի Օրը» Գյումրիում փառատոն: Նախատեսվելիք իրադարձության, միջոցառման կազմակերպման և մի շարք այլ հարցերի մասին այսօր՝ փետրվարի 9-ին, Գյումրու համայնքապետարանում կազմակերպված հանդիպում-ասուլիսի ընթացքում ներկայացրել են կողմերը: Հանդիպման սկզբում Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Մամոնյանը, ողջունելով ներկաներին, իր խոսքում կարևորել է փառատոնի կազմակերպումն ու անցկացումը, ապա պատրաստակամությունը հայտնել աջակցելու համայնքապետարանի ունեցած հնարավորությունների շրջանակներում: Վարդգես Մամոնյանն իր խոսքում նաև նշել է, որ փառատոնի կազմակերպման և անցկացման համար առաջարկով հանդես է եկել համայնքի ղեկավարի տեղակալ Դավիթ Առուշանյանը, առաջարկը քննարկել են համատեղ, ապա համայնքի ղեկավարը տվել է իր համաձայնությունը:

Անցկացվելիք միջոցառման մանրամասների, կազմակերպչական հարցերի մասին խոսեց ու ամբողջական ծրագիրը ներկայացրեց «ԷվենտՏուրա» ընկերության համահիմնադիր Մերի Բադալյանը: Վերջինս մանրամասն խոսեց ծրագրի իրականացման համար անհրաժեշտ աշխատանքների, միջոցների և մի շարք այլ հարցերի մասին:

Փառատոնի կազմակերպման և անցկացման, դրա արդյունքում տուրիստական հոսքի ավելացման և բազմաթիվ այլ հարցերի մասին խոսեց նաև Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ Դավիթ Առուշանյանը: Դավիթ Առուշանյանը նաև նշեց, որ նախատեսվում է փառատոնը կազմակերպվելու ոչ մեկ անգամ. «Այն անցկացվելու է ամեն տարի, այն դառնալու է Գյումրիի փառատոն», - ավելացրեց Դ. Առուշանյանը:

Ասուլիսի ավարտին կողմերը կնքեցին հուշագիր, որում ամրագրված են կետեր՝ փառատոնի կազմակերպման և անցկացմանն առնչվող մի շարք հարցերի վերաբերյալ:

Գյումրու համայնքապետարան
8 February, 12:07

Գյումրի համայնքի ավագանու հերթական նիստ

Նիստին կարող եք հետևել այս հղումով

<https://www.youtube.com/watch?v=ia15NoUAXc>

Գյումրու համայնքապետարան

7 February, 12:41

Սուբվենցիոն ծրագրի շրջանակներում 2022թ.-ին նախատեսվում է հիմնանորոգել Գյումրի քաղաքի թվով 22 փողոց/փողոցի հատված:

Ցանկում ընդգրկված են փողոցներ՝ քաղաքի տարբեր հատվածներից:

Պարոնյան փողոց՝ (Շչեդրին փող-ից հարավ՝ մինչև բնակելի տների վերջնամաս) 426մ

Գյումրու համայնքապետարան

4 February, 19:30

Սույն թվականի փետրվարի 4-ին Գյումրու համայնքապետարանի նիստերի դահլիճում կայացավ

ԿԿԿ Դաշինք Ծրագրի հանրային տրանսպորտի աշխատանքային խմբի նիստ:

Նիստին մասնակցում էին ՀՀ Բարձր տեխնոլոգիաների և արդյունաբերության նախարարության, ՀՀ ՏԿԵՆ ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության լիցենզավորման և թույլտվության վարչության, Լոռու և Շիրակի մարզերի տրանսպորտի վարչությունների, Վանաձոր և Գյումրի համայնքների տրանսպորտի բաժինների ներկայացուցիչներ և ԿԿԿ Դաշինք Ծրագրի փորձագետները, ԿԿԿ Դաշինք Ծրագրի ղեկավարը և անձնակազմը:

Ասխատանքային Խմբի Ղեկավար՝ Դավիթ Մելքոնյան

Աշխատանքային Խմբի քարտուղար՝ Էդիկ Մանուկյան

Նիստի օրակարգում քննարկվեցին՝

1. «ԴԱՇԻՆՔ» հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի Գյումրի և Վանաձոր համայնքներում տրանսպորտի հարցերով քաղաքի իրականացման ռազմավարական մոտեցումները և գործողությունների ծրագիր» նախագիծը.

2. Վանաձորի և Գյումրու ներհամայնքային երթուղային ցանցերում շահագործման համար անհրաժեշտ էլեկտրական ավտոբուսների և դրանց լիցքավորման կայանների ձեռքբերման տեխնիկական բնութագրի նախագիծը:

Երկու փաստաթուղթն էլ հավանության արժանացան ԱՄ անդամների կողմից և հետագայում կորվեն ավելի լայն քննարկման՝ մինչև ՏԻՄ-երի հաստատմանը ներկայացնելը:

Վանաձորի համայնքապետարանը՝ համագործակցելով Հայաստանում՝ Գյումրու և Լեհաստանում՝ Պիլա քաղաքի համայնքապետարանների հետ իրակացնում է ԴԱՇԻՆՔ հանուն կայուն և կանաչ կառավարման (ԿԿԿ ԴԱՇԻՆՔ) [ABC.GoV: Alliance for Better City Governance](http://ABC.GoV:Alliance for Better City Governance)) ծրագիրը, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

<https://www.aravot.am/>

Սպանություն Գյումրու կենտրոնում՝ Զորավար Անդրանիկի հուշարձանի մոտ

Փետրվար 27, 2022

Aravot.am-ի տեղեկություններով, գիշերը սպանություն է տեղի ունեցել Գյումրու կենտրոնում՝ Անդրանիկ Օգանյանի հուշարձանի մոտ: Շիրակի մարզի ոստիկանապետ Արամ Ղազարյանը հաստատեց մեր տեղեկությունը՝ հայտնելով՝ գիշերը ժամը մեկն անց ութ թոպեին շտապօգնությունից ոստիկանություն ահազանգ է ստացել, որ Անդրանիկ Օգանյանի հուշարձանի դիմացից դանակահարված վիճակում երիտասարդ է տեղափոխել Գյումրի բժշկական կենտրոն: Գյումրի բժշկական կենտրոնից էլ հայտնել են, որ իրենց մոտ է տեղափոխվել 1987 թվականին ծնված Վահագն Հարությունյանը՝ «կտրած-ծակած վերք, կենսաբանական մահ» ախտորոշմամբ: Կասկածյալ դեռ չկա:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/02/27/1250302/>

«Շիրակի ձմեռ-2022»-ը ջերմ եղանակով ու ջերմ մթնոլորտում անցկացվեց

Փետրվար 26, 2022 1

Շիրակի մարզի Մեծ Սարիար բնակավայրի անտառային հատվածում այսօր տեղի է ունեցել «Շիրակի ձմեռ-2022» փառատոնը: Ձմեռը ժպիտով ճանապարհելու և բարձր տրամադրությամբ գարունը դիմավորելու միջոցառումն իրական տոն է դարձել բոլորի համար: Ներկաներին ողջունել են ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանն ու Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանը: «Շատ ուրախ եմ, որ բարձր տրամադրություն եմ զգում ամենուր, շատ կարևորում եմ նաև միջոցառումների տրամաբանության մեջ փոփոխություն մտցնելը: Այժմ Մեծ Սարիարում ենք և ևս մեկ անգամ հավաստում ենք, որ նպատակ ունենք Շիրակի մարզի յուրաքանչյուր համայնք, յուրաքանչյուր բնակավայր զարգացնել: Մեծ աշխատանք է տարվել միջոցառումն իրականություն դարձնելու համար: Թող «Շիրակի ձմեռ-2022» փառատոնը ճանապարհի ձմռան վատ եղանակն՝ ազդարարելով զարնան սկիզբը», - ողջույնի խոսքում նշել է Շիրակի մարզպետը:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/02/26/1250222/>

Շիրակի մարզպետը Վահան Քերոբյանին է ներկայացրել մարզի գյուղատնտեսական հիմնահարցերը

Փետրվար 26, 2022

Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանն այսօր ընդունել է ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանին: Հանդիպման ժամանակ քննարկվել են մարզի տնտեսությանը, արդյունաբերությանը վերաբերող հարցեր: Մասնավորապես, կարևորվել է պետություն-մասնավոր հատված համագործակցության խորացումն ու Շիրակի ներուժն ու առկա հնարավորությունների զարգացումը: Անդրադարձ է կատարվել նաև զբոսաշրջությանը, մարզի ուժեղ կողմերին ու զբոսաշրջային առավելությունների օգտագործմանը: Շիրակի մարզպետը ներկայացրել է նաև գյուղատնտեսական հիմնահարցերն ու առաջիկա գյուղատնտեսական տարվան ընդառաջ մարզի առջև ծառայած հիմնախնդիրները: Էկոնոմիկայի նախարարը տեղեկացրել է, որ գյուղատնտեսական տարվա մեկնարկից առաջ կառավարության հաջորդ նիստով պարարտանյութի սուբսիդավորման հարցը լուծում կստանա: ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/02/26/1250213/>

Մեկ օր Գյումրիում. ՔՊ-ական պատգամավորները՝ ցեխերի, թշվառ տնակների ու փլուզվող շենքերի մեջ (ֆոտոշարք)

Փետրվար 25, 2022

Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանի հրավերով՝ այսօր ՔՊ-ական պատգամավորների 19 հոգուց բաղկացած խումբն այցելեց Գյումրի՝ լինելով ինչպես ավտոկայանի տնակային թաղամասում, այնպես էլ օր օրի փլուզվող վթարային մի քանի շենքերում՝ Տիգրան Մեծ, Բսահակյան 9ա, Անտառավան 26, որտեղ բնակվելը դարձել է կյանքի ու մահվան պայքար: ՔՊ-ականները թակում էին դռները ու ներս մտնում: Ակնհայտ էր, որ նրանցից շատերը երբևէ տնակներում չէին եղել. Հովիկ Աղազարյանի տված հարցերը հենց այդ մասին էին վկայում: Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Խաչատուր Խնձրցյանը պատգամավորին պարզաբանեց, որ վարչապետի որոշմամբ հանձնաժողով է ստեղծել, որը հաշվառել է մարզի, այդ թվում Գյումրիի ոչ հիմնական, տնակային շինությունները: Ըստ Խաչատուր Խնձրցյանի, այս պահի դրությամբ 2765 տնակներ կան Գյումրիում:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/02/25/1250057/>

1 միլիարդ 435 միլիոն դրամ՝ Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի եւ Սյունիքի մարզպետարաններին

Փետրվար 23, 2022

Մուրվենցիոն ծրագրերի իրականացման համար գումար կհատկացվի Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի եւ Սյունիքի մարզպետարաններին: Այդ մասին որոշումը կայացվեց կառավարության այսօրվա նիստում: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Մանուսյանն ասաց, որ այդ նպատակով կհատկացվի 1 միլիարդ 435 միլիոն դրամ՝ նշյալ մարզերի 13 համայնքներում շուրջ 15 սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար: Ըստ նրա, Արագածոտնի մարզպետարանին կհատկացվի 4 միլիոն դրամ, Արարատի մարզին՝ 42,2 միլիոն դրամ, Արմավիրի մարզին՝ 28 միլիոն դրամ, Գեղարքունիքին՝ 145 միլիոն, Լոռու մարզին՝ 38 միլիոն, Շիրակին՝ 23 միլիոն եւ Սյունիքի մարզին 1 միլիարդ 181 միլիոն դրամ: Գնել Մանուսյանը հստակեցրեց, որ Սյունիքին հատկացվող գումարը Քաջարանի բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքային բարելավման ծրագրի իրականացման նպատակով է, որում ընդգրկված են քաղաքի 25 շենքեր, որոնցից 3-ն ավարտական տեսքի է բերվել, 22-ում 60 տոկոս է ավելի աշխատանք է արվել. «Այս խոշոր ծրագրում կառավարությունն ունի 70 տոկոս մասնակցություն, 25 տոկոսը ՄԱԿ-ի զարգացման ծրագրերով է եւ միայն 5 տոկոսն է, որ համայնքը պետք է տրամադրի: Այդ 5 տոկոսի կեսը «Ձանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատն» է հատկացրել որպես հովանավոր: Ստացվում է, որ Քաջարանի 25 շենքերի նման ծավալի հսկայական ծրագրին համայնքն ունեցել է 2,5 տոկոս մասնակցություն»: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկայացրեց՝ մյուս համայնքներում ինչ սուբվենցիոն ծրագրերի համար է տրվում գումարը. «Մասնավորապես, Արագածոտնի մարզի Բյուրական համայնքում փողոցների արտաքին լուսավորության մասին է խոսքը: Ըստ հաշվետվության՝ աշխատանքներն ավարտված են: Արարատի մարզի Վարդաշեն համայնքում ոռոգման ներտնտեսային ցանցի բարելավման աշխատանքներ են իրականացվել, որը նույնպես ավարտված է: Արտաշատում մի շարք շենքերի տանիքների հիմնանորոգման հարցն է լուծվել: Այս ծրագիրը նույնպես ավարտված է: Մասին քաղաքի 38 շենք եւ ոստիկանություն տանող ճանապարհի ու մայրերի կառուցման ծրագիրն է, նույնպես ավարտված է: Գեղարքունիքի Օնվինար համայնքում խմելու ջրագծի կառուցում է իրականացվել, շինարարությունն ընթացքի մեջ է, 70 տոկոսն արված է: Խոշոր ծրագիր է՝ 149 մլն դրամի»: Փաշինյանը նաեւ հայտնեց, որ նույն մարզի Գեղարքունիք համայնքում խմելու ջրագծի հիմնանորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են: «Ճամբարակ համայնքի Բսահակյան, Վերին Ճամբարակ թաղամասերի, ինչպես նաեւ Այգուտ բնակավայրի ջրագծերի ներքին եւ արտաքին ցանցերի կառուցման աշխատանքներ են իրականացվել, ծրագիրն ավարտված է: Ճամբարակի 2 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքներ, որն արված է 90 տոկոսով: Լոռու Շմլուղ բնակավայրի զբոսայգում վերանորոգումն է իրականացվում, 90 տոկոսով արված է: Ջրաշենում արեւային կայան է կառուցվել, ծրագիրն ավարտված է», - ասաց Նիկոլ Փաշինյանը:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/02/23/1249401/>

«Կենդանասերի քողի տակ որոշակի գործընթաց են իրականացնում»։ Շիրակի մարզպետը՝ շների սպանդի մեջ իրեն մեղադրողներին

Փետրվար 21, 2022

Այսօր Արթիկ խոշորացված համայնքի Լեռնակերտ գյուղի մշակույթի տանը պաշտոնավարման 100 օրվա առիթով հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանին հարց ուղղվեց թափառող շների խնդրի կարգավորման մասին: Նա ասաց. «Ես կարծում եմ այս լիազորությունը հստակ է, և ինձ համար տարակուսելի է, որ լրագրողները կրկին ու կրկին հարց են տալիս՝ մեզ ուղղված: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը հստակ սահմանում է լիազորությունները, մարզպետը կարող է գործընթացին հետևել: Ցավոք սրտի, իմ վերջին խորհրդակցության արդյունքում որոշակի արտահայտություն ձևախեղելով՝ փորձել են նաև տրամաբանություն տալ: Ես լինելով երկու կրթությամբ իրավաբան՝ գուտ օրենքն եմ մեկնաբանել և դրա մեջ կարծում եմ՝ որևէ այլ խնդիր չկար: Նույն տրամաբանությունը կարող էր լինել, եթե որևէ մեկը ինձ խնդրեր Քրեական օրենսգրքից որևէ այլ հոդված մեկնաբանել և նշել այն գործիքակազմը, որը կա: Գործիքակազմը, որը կա՝ Հանրաքվեի և՛ Տեղական հանրաքվեի օրենքով սահմանած է, որ դեպքում ինչ ձևաչափով կարող են քաղաքացիները իրենց մասնակցությունն ունենալ օրինաստեղծ գործընթացում»:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/02/21/1249051/>

Ամասիայի ՔՊ-ականները մանդատներից հրաժարվել են առանց կուսակցության գիտության. Շիրակի մարզպետի պարզաբանումը

Փետրվար 21, 2022

Ինչպես տեղեկացրել ենք, Ամասիա խոշորացված համայնքում հետընտրական թեժ վիճակ է բողոքի ցույցերը չեն դադարում: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակը գլխավորող Մերգել Ղարիբյանի համակիրները չեն հաշտվում այն մտքի հետ, որ Ամասիայում ամենաշատ ձայներ հավաքած քաղաքական ուժը չպիտի ստանձնի համայնքապետի դերը: ՔՊ-ն հրաժարվել էր իր վեց մանդատից՝ հույս ունենալով, որ նոր ընտրություններ կնշանակվեն: Մինչդեռ այստեղ համայնքապետ ընտրվեց «Արփի- Ամասիա» դաշինքի թեկնածու Ջեմալ Հարությունյանը: Այժմ էլ Մերգել Ղարիբյանի համակիրները չեն թույլատրում նրան հանձնել նախկին Արփի համայնքի գույքն ու փաստաթղթերը: Նրանք դեռ հույս ունեն, որ նոր ընտրություններ կնշանակվեն: Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանն այսօր իր պաշտոնավարման 100 օրվա առիթով հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ անդրադառնալով Ամասիայում տեղի ունեցող հետընտրական բողոքի ցույցերին, մասնավորապես ՔՊ-ի ցուցակը գլխավորող Մերգել Ղարիբյանի ու նրա համակիրների կողմից նախկին Արփի խոշորացված համայնքի փաստաթղթերը Ամասիայի նորընտիր դեկավար Ջեմալ Հարությունյանին չհանձնելուն, ասաց. «Տեսե՞ք՝ ինչպիսի գործընթաց ունենք Ամասիայում. լրագրողներն այս թեմային շատ են անդրադառնում, բայց մարզպետի հետ չեն հիշում որ ցանկություն լինել խոսելու, որ պարզաբանում տայի: Ես չեմ ուզել միջամտել գործընթացին»:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/02/21/1249035/>

Շիրակի մարզպետի ուրախալի նորությունը՝ պարարտանյութի թանկացումից խուճապի մեջ գտնվող ֆերմերներին

Փետրվար 21, 2022

Ինչպես տեղեկացրել ենք, ազոտական պարարտանյութի գնի եռակի թանկացումը խուճապ է առաջացրել ֆերմերների մոտ. նրանք անընդմեջ բողոքի ցույցեր են անցկացնում, ելույթներ ունենում լրատվամիջոցներով՝ նախագրուշացնելով, որ խնդիրը չլուծելու դեպքում բնամթերքի կտրուկ թանկացումներ են սպասվում: Իրենք ստիպված են կրճատել մշակվող ցանքատարածությունները: Ըստ ֆերմերների, պարարտանյութ ներկրում են երեք երկրներից՝ Ռուսաստանի Դաշնությունից, հարևան Վրաստանից և Իրանի Իսլամական Հանրապետությունից, իսկ թանկացումը նշանակում է հրաժարվել գյուղատնտեսությունից, թաղել այն: Նրանք հանդիպում էին ունեցել նաև Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանի հետ՝ խնդրելով պատասխանատուների հետ խորհրդակցել ու խնդրի լուծման տարբերակ առաջարկել: Շիրակի մարզպետը, որն այսօր իր պաշտոնավարման 100 օրվա աշխատանքները ներկայացրեց հանրությանը՝ Արթիկի Լեռնակերտ գյուղի մշակույթի տանը մամուլի ասուլիս տալով, անդրադարձավ նաև կարևոր այս խնդրին:

«Գիտենք, որ տարածաշրջանում գազի սակագնով և որոշակի տնտեսական գործառնություններով պայմանավորված՝ ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլ նաև մեր հարևան երկրներում գինը շեշտակի թանկացել է, այդ թվում հիմնական ներկրվող երկրներից՝ Իրանից և Ռուսաստանի Դաշնությունից: Այս ընթացքում քննարկումներ ունեցել ենք և՛ փոխնախարարի և՛ նախարարի հետ, և հարցը կառավարության ուշադրության կենտրոնում է: Նախորդ շաբաթ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի մոտ տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում հստակեցվել են մոտեցումները: Այո՛, մենք գնալու ենք սուբսիդավորման գործընթացին: Եթե հիշում եք, նախորդ շաբաթ Ազգային ժողովում կառավարության հարցուպատասխանի ընթացքում նույնպես հնչեց այս հարցը և այս շաբաթվա ընթացքում պետությունը ի դեմս կառավարության, կկարողանա ամբողջացնել իր մոտեցումները: Այո, սուբսիդավորման գործընթաց է լինելու, որովհետև ստացվում է՝ եթե դա չլինի, կնշանակի շուրջ երեք անգամ գնաճ, ինչը կարծում եմ կաթվածահար կանի գյուղատնտեսությունը: Մենք հավանում ենք, որ պարարտանյութի գնի աճը ենթադրում է նաև բնամթերքի աճ, այսինքն՝ աշնան ժամանակահատվածում, բերքահավաքի

Ժամանակ մենք կունենանք սոցիալական ճգնաժամ: Ես ավելորդ փակագծեր չբացեմ, կունկրետ կառավարությունը իր մոտեցումներ է ներկայացնում: Ես չնշեմ սուբսիդավորումը որքան տոկոսով է տեղի ունենալու, բայց այո , գուզընթաց բանակցային այն գործընթացների, որպեսզի մենք ներկրման որոշակիորեն այլ աղբյուրներ ունենանք, զարկ տանք նաև այս դեպքում պարարտանյութի արտադրությանը մեր երկրում և գնանք ավելի բնական ճանապարհով, միակ ելքը կարծում եմ կառավարության անմիջական միջամտությունը պետք է լինի, որին էլ թերևս կապավինեն», -ասաց Նազելի Բաղդասարյանը: Նունե ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/02/21/1249032/>

Ինչպե՞ս է աշխատում Նազելի Բաղդասարյանն ընդդիմադիր համայնքապետերի հետ

Փետրվար 21, 2022

Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանն այսօր Արթիկ խոշորացված համայնքի Լեռնակերտ գյուղի մշակույթի տանն իր պաշտոնավարման 100 օրն ամփոփելիս՝ պատասխանելով լրագրողներից մեկի այն հարցին, թե ի՞նչ հարաբերությունների մեջ է գտնվում ընդդիմադիր հայացքներ ունեցող համայնքապետերի հետ, ասաց. « Ի նպատակի և ի շահ մարզի, որովհետև համայնքապետը կարող է լինել ընդդիմադիր, համայնքը չի կարող լինել ընդդիմադիր: Ես այժմ զբաղեցնելով ոչ թե քաղաքական, այլ վարչական պաշտոն՝ իմ մոտեցումներն ասել եմ, որ ես բոլորի մարզպետն եմ՝ անկախ քաղաքական հայացքներից: Video Player շիջեցնենք, որ Շիրակի մարզում դեկտեմբերի 5-ին կայացած ՏԲՄ ընտրություններում Ախուրյան խոշորացված համայնքի ղեկավար ընտրվել էր դաշնակցական Արծրուն Իզիթյանը, իսկ Ամասիայում՝ «Արփի Ամասիա» դաշինքի թեկնածու Ջենմա Հարությունյանը: Այստեղ հետընտրական բողոքի ցույցերը դեռ չեն դադարում, ՔՊ-ականներն ու նրանց համակիրները շարունակում են պայքարել նոր ընտրություններ նշանակել տալու համար:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/02/21/1249017/>

«Ադրբեջանում Շիրակի մարզից կան 30 գերիներ. 62-ից 32-ը վերադարձել են». մարզպետն ամփոփեց 100 օրը

Փետրվար 21, 2022

Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանն այսօր Արթիկ խոշորացված համայնքի Լեռնակերտ գյուղի մշակույթի տանն ամփոփեց իր պաշտոնավարման 100 օրը: Նա հանդես եկավ մամուլի ասուլիսով, որին լրագրողներից բացի՝ մասնակցում էին Շիրակի մարզպետարանի բոլոր վարչության պետերը, նաև Արթիկ խոշորացված համայնքի պատասխանատուները: Մարզպետը նախևառաջ պարզաբանեց, որ ասուլիսի համար Լեռնակերտը որպես տեղանք ընտրելը պատահական չէ, կյանքն ու իրադարձությունները պետք է ապակենտրոնացնել, իսկ ամեն անգամ մարզի մի համայնք ընտրելով՝ կկարողանան և՛ շունչ հաղորդել, և՛ զբոսաշրջային առումով գրավիչ դարձնել:

Նազելի Բաղդասարյանը նշեց, որ Շիրակի մարզում ամենաառաջնային խնդիրը գործազրկությունն է: Նա անկեղծացավ, թե Շիրակի մարզպետի պաշտոնը ստանձնելիս՝ մտորումների մեջ էր՝ կկարողանա՞ օրենսդիրից սահուն կերպով գործադիր տեղափոխվել, քանի որ իրեն մշտապես պատկերացրել է օրենսդիր դաշտում, սակայն պաշտոնավարման 100 օրվա ընթացքում կարողացավ որոշակի աշխատանք ցուցադրել նաև գործադիր ոլորտում: «Խնդիրներ իրապես շատ ունենք, Շիրակի մարզը շարունակում է մնալ տնտեսապես ամենախոցելի մարզը՝ գործազրկության բարձր շեմով, բայց աղքատությունը և տնտեսական խնդիրները, որոնք առկա են մեր մարզում, ես վստահ եմ, որ հաղթահարելի են: Այս կարճ ժամանակահատվածում գործընթացները, որոնց մեկնարկ են տվել, շարունակական պետք է լինեն: Խոսելով մեր մարզի խնդիրների մասին՝ չեմ կարող չառանձնացնել մեկը՝ մեր մարզից գերեզմարված տղաների խնդիրը: Անկեղծ ասած իմ փոքրիկ ուշացումը, որի համար հայցում եմ ձեր ներողամտությունը, պայմանավորված էր նրանով, որ անգամ հարյուր օրվա ամփոփումից առաջ ես իմ պարտքը համարեցի մեկ անգամ լսել ծնողներին և նոր գալ: Գաղտնիք չեմ լինի բացահայտած, որ ամեն օր ժամը 12-ին հարազատները հավաքվում են Շիրակի մարզպետարանում: Այս պահի դրությամբ հաստատված գերիների ցանկից 62-ից 32-ը վերադարձել են: 30-ը գտնվում են Ադրբեջանում, գործընթացները շարունակվում են: Պետք է նշեմ, որ մեր հաստատված գերիների հետ հարազատները ունեն նամակագրական կապ, խոսակցական և երբեմն տեսանյութերով, որոնք Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի միջոցով է իրականացվում, և մենք լիահույս ենք, ջանք ու եռանք չենք խնայում, որպեսզի օր առաջ տղաները վերադառնան տուն», – ասաց մարզպետը: Նա խոսեց նաև սուբվենյուս ծրագրերից, տեղեկացրեց, որ Շիրակի մարզից 44 հայտ են ներկայացրել, որից 5-ը Գյումրի քաղաքից է, մնացած 39-ը գյուղական համայնքներից: «Անցած տարի ունեցել ենք և՛ հաջողություններ, և՛ անհաջողություններ: Փորձում ենք կառավարելի դարձնել այն ռիսկերը, որոնք վերաբերում են գյուղատնտեսությունը: Նախորդ տարի, ցավոք սրտի, մենք ռոզգման հետ կապված խնդիրներ ունեցանք և այս տարի հունվար ամսից աշխատանքներ ենք տանում, որպեսզի ռոզգման սեզոնից առաջ ամբարված ջուր ունենանք, որպեսզի այդ խնդիր կարգավորենք: Ցավոք սրտի, որոշ ցանքատարածությունների կրճատումը նախորդ տարվա դրանով է պայմանավորված: Բայց ցուցանիշների առումով ավելացում ունենք, որը կապված է հացահատիկի արտադրության հետ: Շիրակի մարզը, լինելով հացահատիկի շտեմարան, այդ բացը կարողացել է լրացնել: Անասնազվիսաքանակի մասով նշեմ, որ նախորդ տարի աննախադեպ էր հատկապես ոչխարների ու այծերի թվի ավելացմամբ՝ շուրջ 10 հազար գլխաքանակ, որը կարծում եմ պետք է խթանել», - ասաց մարզպետը: Նա կարևորեց նաև գյուղական վայրերում զբոսաշրջության զարգացումը: Նունե ԱՐԵՎՇԱՏՅԱՆ
Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/02/21/1248993/>

Կբարձրացնե՞ն Շիրակի մայր բուհի դասախոսների «անարժանապատիվ» աշխատավարձը. նորընտիր ռեկտորի պարզաբանումը

Փետրվար 19, 2022

Ինչպես տեղեկացրել ենք, այսօր Շիրակի պետական համալսարանում կայացավ ռեկտորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթը և 12 կողմ, 7 դեմ ձայներով ընտրվեց մեն ու միակ թեկնածուն՝ Երվանդ Սերոբյանը: Նա 3 տարուց ավելի է՝ Շիրակի մայր բուհում կատարում է ռեկտորի պարտականությունները: Բուհում ռեկտորի թափուր պաշտոնի համար մրցույթներ կայացել էին երեք տարի առաջ, սակայն որևէ մեկը չէր ընտրվել: Նախորդ մրցույթներին Երվանդ Սերոբյանը չէր մասնակցել: Այսօր ՇՊՀ-ի հոգաբարձուների 20 անդամներից ներկա էին 19-ը, հիվանդ լինելու պատճառով չէր ներկայացել միայն Գյումրու փոխքաղաքապետ Արթուր Պապիկյանը: Հոգաբարձուների խորհրդի նիստը տևեց մոտ 3 ժամ: Ընտրվելուց հետո Երվանդ Սերոբյանը ճեպագրույց ունեցավ լրագրողների հետ: Լրագրողներից մեկի հարցին, թե արժապատիվ է արդյոք բուհի դասախոսների աշխատավարձը և պլանների մեջ կա՞ աշխատավարձի բարձրացում, նորընտիր ռեկտորն ասաց՝ անկեղծորեն կասեմ, արժանապատիվ չէ: Նա նաև մանրամասնեց, որ իր ծրագրում նախատեսել է աշխատավարձի բարձրացում, սակայն չի կարող ասել որքան: «Լսեցիք, որ իմ ծրագրում տեսանելի ապագայում կա աշխատավարձի բարձրացում, եթե հարցնեք՝ ի՞նչ չափով, բնական է բյուջեն կորոշի և կորոշի հոգաբարձուների խորհրդի հաստատմամբ», - ասաց Երվանդ Սերոբյանը: Այն հարցին էլ, թե՞ ռեկտորի աշխատավարձը բուհում 700 հազար դրամ է, սա որքանով է արդարացված, երբ դասախոսների աշխատավարձն այդքան ցածր է, Երվանդ Սերոբյանը պատասխանեց, որ աշխատավարձի այդ չափը ինքը չէ որոշել: Ըստ նրա, երբ ստանձնել է բուհի ռեկտորի ժ/պ պարտականությունները, այն հաստատված է եղել հոգաբարձուների խորհրդով, ինքն առաջարկել է նվազեցնել, սակայն հոգաբարձուների խորհուրդը չի համաձայնել՝ գտնելով, որ տվյալ բյուջեի կառավարիչը 700 հազար դրամ պիտի ստանա: Հարցին՝ իսկ հիմա կքննարկե՞ք ձեր, ինչպես նաև վարչական աշխատակիցների աշխատավարձը նվազեցնելու հարցը, Երվանդ Սերոբյանը կարծիք հայտնեց, որ նվազեցնելով հարցը չի կարգավորվի, այլ՝ դասախոսների աշխատավարձը պիտի բարձրացնել: Մեր հարցին, թե բուհի անունը շոշափվում է մի քանի քրեական գործերում, դատարաններում, ի՞նչ անելիք կա մթնոլորտը հարթեցնելու առումով, Երվանդ Սերոբյանն ասաց. «Աշխատանքի վերականգման մասով կան նախկին աշխատակիցներ, որոնք դատական գործընթացների մեջ են: Բսկ մթնոլորտի հարթեցման առումով ասեմ, այն, ինչ ունեինք 3,5-4 տարի առաջ և ինչ ունենք հիմա, խիստ տարբերվում են իրարից: Մենք ունենք աշխատանքային մթնոլորտ, աշխատանքային միջավայր, իսկ եթե ձեզ թվում է՝ 450 հոգանոց կոլեկտիվում կառավարչից բոլորը պետք է գոհ լինեն, եթե նման բան լինի, հաջորդ օրն այդ կառավարչին պիտի ուղղակիորեն հանել աշխատանքից: Ցանկացած որոշում որոշ մարդկանց կողմից անտարբերությամբ է ընկալվելու, մյուս մասի կողմից ընկալվելու է որպես դժգոհություն, մի մասն էլ կարող է գոհ լինել: Դա օրինաչափ երևույթ է», - ասաց Երվանդ Սերոբյանը:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/02/19/1248606/>

Երվանդ Սերոբյանն ընտրվեց Շիրակի մայր բուհի ռեկտոր

Փետրվար 19, 2022 14:38 449 Շիրակի մայր բուհի ռեկտոր ընտրվեց Երվանդ Սերոբյանը, որը միակ թեկնածուն էր: Սերոբյանը ռեկտորի պաշտոնակատար էր 3 տարուց ավելի: Երվանդ Սերոբյանն ընտրվեց 12 կողմ և 7 դեմ ձայներով: Հոգաբարձուների խորհրդի նիստին 20 անդամներից մասնակցում էին 19-ը:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/02/19/1248571/>

Շիրակի պաշտոնյաներից ովքե՞ր են չարաշահել իրենց դիրքն ու որքան վնաս հասցրել պետությանը. դատախազի պարզաբանումը

Փետրվար 17, 2022

Aravot.am-ը Շիրակի դատախազ Գուրգեն Գրիգորյանից հետաքրքրվեց, թե պաշտոնական դիրքի չարաշահման ու պետությանը վնաս հասցնելու համար ի՞նչ քրգործեր կան հարուցված և ովքե՞ր են այդ պաշտոնյաները, որոնք կասկածվում են պետության դեմ գործած ծանր հանցանք կատարելու մեջ: Մենք նաև հարցրեցինք, թե դատախազությունը պետությանը պատճառված որքան գումարի վնաս է վերականգնել: -Պաշտոնական դիրքի չարաշահման, այդ թվում նաև՝ պաշտոնական դիրքը օգտագործելով յուրացնելու կամ վատնելու եղանակով հափշտակությունների առթիվ 2021թ. ընթացքում հարուցվել են բազմաթիվ քրեական գործեր, մասնավորապես՝ քրեական գործեր են հարուցվել մի շարք ուսումնական հաստատություններում (Արդենիսի հիմնական դպրոց, Փոքր Մանթաշի միջնակարգ դպրոց, Գյումրու թիվ 19 դպրոց, Արթիկի թիվ 1 դպրոց, Գյումրու թիվ 2 միջնակարգ դպրոց, Նոր Ախուրյանի հիմնական դպրոց), բուժսպասարկում իրականացնող հաստատություններում (Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց, Գյումրու թիվ 2, թիվ 3 պոլիկլինիկաներ), ինչպես նաև այլ գործառույթներ իրականացնող ՊՈԱ կազմակերպություններում /Արփի լիճ ազգային պարկ, Ա.Նազարյանի անվան երկրաֆիզիկայի և սեյսմաբանության ինստիտուտ/առերևույթ չարաշահումների դեպքերի (ինչպես ծանր, այնպես էլ՝ ոչ մեծ ծանրության դեպքերի առթիվ) առթիվ, որոնց արդյունքում պետությանը պատճառվել են գույքային վնասներ: 2021 թվականի ընթացքում քննված (ինչպես նախորդ տարիներին փոխանցված, այնպես էլ՝ 2021 թվականին հարուցված) քրեական գործերով պարզված՝

պետությանը պատճառված վնասի չափը կազմել է 106.146.000 ՀՀ դրամ, որից մինչդաստական վարույթի ընթացքում վերականգնվել է 24.759.148 ՀՀ դրամ: Հարկ է նշել նաև, որ հարուցված քրեական գործերով հաստատված համայնքներին պատճառված վնասի մի մասը՝ 14.470.000 ՀՀ դրամը գումարը, քրեական գործերով մինչդաստական վարույթի ընթացքում վերականգնվել է:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/02/17/1248237/>

Շիրակի մարզպետի ոչ ավանդական ասուլիսը

Փետրվար 16, 2022 Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանը երկուշաբթի՝ փետրվարի 21-ին, կամփոփի իր պաշտոնավարման 100-րդ օրը ու հանդես կգա մամուլի ասուլիսով: Ուշագրավն այն է, որ մարզպետն ասուլիս կտա ոչ թե Շիրակի մարզպետարանի շենքում՝ իր առանձնասենյակում, ինչպես սովորաբար ընդունված է անել, այլ Արթիկ խոշորացված համայնքի գյուղերից մեկում՝ Լեռնակերտում, որը գտնվում է Գյումրիից 28 կիլոմետր հարավ-արևելք: Քիչ առաջ Շիրակի մարզպետարանի պաշտոնական էջում տեղադրվեց հրավեր-հայտարարությունը՝ ուղղված լրատվամիջոցներին: «ԶԼՄ հարգելի գործընկերներ, Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանի աշխատանքային 100 օրերի ամփոփիչ մամուլի ասուլիսը տեղի կունենա Լեռնակերտ բնակավայրի մշակույթի տանը՝ փետրվարի 21-ին ժամը 13.00-ին: Միտքով հրավիրում ենք բոլորին համատեղ քննարկելու անցած ժամանակահատվածում արված աշխատանքները, բարձրացված հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկված քայլերը:

Նկատենք՝ Լեռնակերտի մշակույթի տունը, որտեղ պիտի կայանա ասուլիսը, վերանորոգվել է բոլորովին վերջերս սուբվենցիոն ծրագրով՝ համայնք-պետություն համագործակցության արդյունքում: Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Խաչատուր Խնձրցյանից տեղեկացանք, որ 2020 թվականին վերանորոգման աշխատանքների համար ծախսվել է 10 միլիոն 822 հազար դրամ: Գումարի 45 տոկոսը հատկացրել է պետությունը, 55 տոկոսը՝ համայնքը: Իսկ 2021 թվականին ծախսվել է 9 միլիոն 942 հազար դրամ, գումարի կեսը հատկացրել է պետությունը, կեսը՝ համայնքը: Մշակույթի տունն ունի գրադարան, ընթերցասրահ, հանդիսությունների սրահ, ջեռուցման համակարգ: Լեռնակերտի մշակույթի տանը կազմակերպված ասուլիսը թերևս ոչ միայն լավ առիթ կլինի ցուցադրել պետության կատարած աշխատանքը՝ ֆինանսավորված ծրագրերից մեկի օրինակով, այլ նաև քայլով մարզպետը, հավանաբար, ցույց կտա, որ Շիրակի մարզը միայն Գյումրին չէ: Նույն ԱՐԵՎԾԱՑԱՆ

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/02/16/1248072/>

46 քրգործ՝ ծանր վիրավորանք հասցնելու փաստով. մանրամասնում է Շիրակի դատախազը Ամենակարևոր լուրերը Հայաստանից՝ Telegram-ում Փետրվար 16, 2022 22:22 447 «Ծանր վիրավորանք հասցնելու դեպքերով 2021 թ. ընթացքում մարզի շրջանակում հարուցվել է 46 քրեական գործ: Դրանցից 6-ը կասեցվել են, որոնցից 5-ը՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով, 1-ը՝ մեղադրյալի գտնվելու վայրը պարզված չլինելու հիմքով: 15 քրեական գործեր կարճվել են տարբեր՝ հանցակազմի/հիմնականում՝ ապացույցների անբավարարություն/ բողոքի բացակայության, կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու, գործուն գոջալու հիմքերով: 2 քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 6 քրեական գործեր մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան: Իսկ 17 քրեական գործերով նախաքննությունը շարունակվում է: Քրեական գործերի մեծ մասը վերաբերել են կենցաղային հողի վրա առաջացած վիճաբանությունների ընթացքում միմյանց հասցեի հայհոյանքներ կատարելուն: 5 քրեական գործ հարուցվել են սոցցանցերում հրապարակայնորեն պաշտոնատար անձանց ծանր վիրավորանք հասցնելու, 1 քրեական գործ՝ սոցցանցի քաղաքացու էջին ծանր վիրավորանք գրառելու և նրան սպառնալու դեպքի առթիվ:

Անձանց անհատական տվյալները հրապարակելը նպատակահարմար չէ, որովհետև դա առնչվում է անձնական գաղտնիքին: Իսկ գրառումները եղել են սեռական բնույթի հայհոյանքներ», -ասաց դատախազը: Նույն ԱՐԵՎԾԱՑԱՆ

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/02/16/1248061/>

Շիրակի դատախազը՝ Գյումրիում հոգեմետ դեղեր վաճառելու ու քովիդի դեմ կեղծ պատվաստումներ մասին

Փետրվար 16, 2022

Շիրակի մարզի դատախազ Գուրգեն Գրիգորյանն Aravot.am-ին տված բացառիկ հարցազրույցում տեղեկություններ տրամադրեց մարզի առողջապահական ոլորտում տեղ գտած չարաշահումների ու քրեական գործերի ընթացքի մասին: Ինչպես հայտնի է, հոգեմետ դեղեր ապօրինի իրացնելու մեղադրանքով քրեական գործ էր հարուցվել «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության երկու աշխատակիցների՝ նկատմամբ, նրանք կալանավորվել էին: Դատախազին հարցրեցինք՝ ի՞նչ փուլում է այդ գործը: Նաև հետաքրքրվեցինք՝ 2021 թվականին արձանագրվել է և՛ դեպքեր, երբ կեղծ բժշկական տեղեկանքներ տրամադրելու համար բուժաշխատողներ են պատժվել: -«Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության աշխատակիցների վերաբերյալ քննվող քրեական գործով մեղադրանքներ է առաջադրվել 12 անձի: Նրանցից 2-ը հիշյալ ընկերության աշխատակիցներ են: Նրանց մեղադրանքներ են առաջադրվել կաշառք ստանալու, հոգեմետ նյութեր ապօրինի իրացնելու, հոգեմետ նյութեր պահելու, բաց թողնելու կանոնները խախտելու համար: 10-ը քաղաքացիներ են, որոնց

մեղադրանքներ են առաջադրվել կաշառք տալու համար: Քրեական գործի նախաքննության ընթացքում նշանակվել են տոքսիկոլոգիական և դատաքիմիական փորձաքննություններ, որոնց եզրակացությունները դեռևս չեն ստացվել: Ձեռնարկվում են միջոցառումներ կաշառք տված բոլոր անձանց ինքնությունները պարզելու, այլ աշխատակիցների կողմից հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությանը հնարավոր մասնակցություն ունենալու վարկածները ստուգելու ուղղությամբ: Քրեական գործով նախաքննությունը շարունակվում է: Առողջապահական ոլորտում կատարված չարաշահումների փաստով, բացի «Գյումրիի Ն.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» ՓԲ ընկերությունում և «Գյումրիի Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն» պոլիկլինիկա ՓԲ ընկերությունում կեղծ պատվաստումների առերևույթ դեպքերի առթիվ քրեական գործերից, քննվում է ևս մեկ քրեական գործ՝ կապված «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲ ընկերության մի շարք բուժաշխատողների կողմից 2020թ. պետպատվերի շրջանակներում բուժօգնություն տրամադրելու պատրվակով տարբեր երեխաների ձևական հիվանդանոցում գրանցելու և պետությունից խաբեությամբ առանձնապես խոշոր չափերով գումարներ հափշտակելու դեպքի հետ: Ինչ վերաբերում է հարցի երկրորդ մասին, ապա քրեական գործերով նախաքննությունը դեռևս շարունակվում է, ուստի կեղծ բժշկական տեղեկանքներ տրամադրելու համար բուժաշխատողների պատժման մասին խոսելը վաղաժամ է: Կարող եք չկասկածել, որ բոլորի արարքներին տրվելու են համարժեք իրավական գնահատականներ և ում մեղքը հաստատվի, պարտադիր ենթարկվելու է քրեական պատասխանատվության: Այսօր արդիական է նաև քովիդի դեմ կեղծ պատվաստումներ կատարելու թեման. Խնդրում ենք մանրամասնել պատվաստումների մասին կեղծ հավաստագիր տրամադրելու դեպքերը, ի՞նչ ընթացքում է հենց այս փաստի համար Գյումրու Վ. Աբաջյանի անվան թիվ 3 պոլիկլինիկայի մի խումբ աշխատակիցների նկատմամբ հարուցված քրգործը: -Շիրակի մարզում քննվում է նաև երկու քրեական գործ: Մեկը կապված է «Գյումրիի Ն.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» ՓԲ ընկերությունում, մյուսը՝ «Գյումրիի Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն» պոլիկլինիկա ՓԲ ընկերությունում կեղծ պատվաստումների առերևույթ դեպքերին: Քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ «Գյումրիի Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն» պոլիկլինիկա ՓԲ-ում կոռուպցիոն բնույթի դրսևորումները կապված են եղել «Covid-19» համավարակի դեմ պատվաստման գործընթացի հետ և դրսևորվել են ընդհանուր շուրջ 105 ՀՀ քաղաքացիների սահմանված դեղատեսակներով և դեղաչափերով չպատվաստելու, այդ պայմաններում կորոնավիրուսային հիվանդության դեմ ամբողջական պատվաստված լինելու հանգամանքը հավաստող կեղծ փաստաթղթեր կազմելու և շրջանառության մեջ դնելու հետ: Այս կապակցությամբ հարկ եմ համարում նշել, որ «Գյումրիի Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն» պոլիկլինիկա ՓԲ ընկերությունում կոռուպցիոն բնույթի դրսևորումների առթիվ քննվող քրեական գործով մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեն արդեն 10 անձինք, որոնց թվում է նաև «Գյումրիի Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն» պոլիկլինիկա ՓԲ-ի նախկին տնօրենը: Այս քրեական գործերով նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ՝ գումարի դիմաց չպատվաստված բոլոր անձանց ինքնությունները պարզելու ուղղությամբ: Այդ կապակցությամբ քրեական գործի մինչդատական վարույթի օրինակառության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից վարույթն իրականացնող քննիչներին տրվել է գրավոր ցուցումներ: Նույն ԱՐԵՎԿԱՏՅԱՆ

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/02/16/1248057/>

Ի՞նչ սպանություններ տեղի ունեցան Շիրակի մարզում. դատախազը ներկայացնում է հանցագործությունների պատկերը Փետրվար 16,2022

Aravot.am-ը Շիրակի մարզի դատախազ Գուրգեն Գրիգորյանից հետաքրքրվեց, թե 2021 թվականին հանցագործությունների ինչպիսի՞ պատկեր ենք ունեցել Շիրակի մարզում. քանի՞ ծանր հանցագործություն է կատարվել, նախորդ տարվա հետ համեմատ՝ ավելացել է, թե՞ պակասել թիվը: Մենք նաև հարցրեցինք, թե ի՞նչ քայլեր են ձեռնարկվում դատախազության կողմից դրանց բացահայտման և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: -2021 թվականի ընթացքում Շիրակի մարզում արձանագրվել է հանցագործությունների 1324 դեպք, որը նախորդ տարվա համեմատ ավելի է 65-ով կամ 5,2%-ով: Հանցագործությունների աճի պայմաններում աճել է նաև բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 67.7%՝ նախորդ տարվա 61.1%-ի դիմաց: Նվազում արձանագրվել է առանձնապես ծանր հանցագործությունների առումով՝ 2020թ. 20 նման դեպքերի դիմաց՝ 2021թ. արձանագրվել է 10 դեպք, այսինքն՝ նվազումը կազմել է 50 %: Ընդ որում, առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտումը կազմել է 77.8 %՝ 2020թ. 53.3 %-ի դիմաց: 16.9 %-ով նվազել են ծանր հանցագործությունները, փոխարենը միջին ծանրության հանցագործություններն ավելացել են 8.5%-ով: Նշված բնույթի հանցագործությունները հիմնականում աճել են մարդու, հասարակական անվտանգության կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների հաշվին: Հանցագործությունների դեմ պայքարը մեծապես կախված է կանխարգելիչ և հակազդող միջոցառումների, ինչպես նաև քրեական վարույթների շրջանակներում իրականացվող քննչական, դատավարական, օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունավետությունից: Բոլոր այս ուղղությունները դատախազության ակնդետ ուշադրության կենտրոնում են: Ավելին, մենք ձգտում ենք դատախազական ներգործության բոլոր հնարավոր միջոցներով նպաստել հանցագործությունների արագ բացահայտմանը, օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննությունների կատարմանը: Մասնավորապես, մեր կողմից մեծ ուշադրություն է դարձվում հանցագործությունները ծնող պատճառների վերացման հարցում հետևողականության դրսևորմանը: Օրինակ՝ 2021թ.-ին դատախազության դատախազների կողմից այդ նպատակով, էլնելով կոնկրետ քրեական գործերով ձեռք բերված փաստական տվյալներից, 61 միջնորդագիր է ուղարկվել պատկան մարմիններին կամ կազմակերպություններին: Դրանց արդյունքում առանձին ուղղություններով ուժեղացվել է ռատիկանության հսկողությունը, իրենց աշխատանքում թերացած պաշտոնատար անձինք ենթարկվել են կարգապահական տարբեր պատասխանատվության միջոցների: Բացի այդ, քրեական գործերով քննությունների օպերատիվությունը, որակը և արդյունավետությունն ապահովվելու նպատակով մարզի դատախազության դատախազների կողմից 2021թ. 104 քրեական գործով վարույթն իրականացնող մարմինն տրվել է 105 գրավոր ցուցում, իսկ 53 քրեական գործով տրվել է 53 ցուցում բովանդակող հանձնարարական: Հետաքննության

մարմիններին տրվել են ընդհանուր 43 հանձնարարականներ, որոնք վերաբերվել են ընթացիկ քրեական գործերով հանցագործության բացահայտման աշխատանքներում օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ակտիվացնելուն, նախաքննական մարմնի հետ սերտ համագործակցությունն ապահովելուն: Առանձնահատուկ դեպքերում կիրառվում են նաև դատախազական ներգործության առավել խիստ միջոցներ: Օրինակ՝ 2021թ. կայացվել է նախաքննություն իրականացնող անձին վարույթից հեռացնելու 8 որոշում: Բացի այդ, ներկայացվել է ծառայողական քննություն անցկացնելու 53 միջնորդություն, որոնցից 40-ն ուղարկվել է ՀՀ ոստիկանություն, 3-ը՝ ՀՀ քննչական կոմիտե, 1-ը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն, 2-ը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական բժշկության կենտրոն և այլն: Ծառայողական քննությունների արդյունքում թվով 11 անձինք ենթարկվել են տարբեր կարգապահական տույժերի: -Խնդրում ենք անդրադառնալ նաև նախորդ տարի կատարված սպանություններին: -2021թ. Շիրակի մարզում արձանագրվել է սպանության 5 և սպանության փորձի 2 դեպք, որոնք բացահայտվել են: Հաշվի առնելով անմեղության կանխավարկածը՝ նշեմ, որ խոսքը մասնավորապես վերաբերում է 2021թ. թվականի մարտի 15-ին առանձին դաժանությամբ Ռաֆիկ Մնացականյանին սպանությանը, որում մեղադրվում է Գյումրի քաղաքի բնակիչ Շ. Թ.-ն, 2021 թվականի մարտի 27-ին Գյումրի քաղաքի բնակիչ Գևորգ Դադրանյանի սպանությանը, որում մեղադրվում է Երևան քաղաքի բնակիչ, անչափահաս Դ. Վ.-ն, 2021թ.-ի ապրիլի 20-ին կատարված Լիաննա Վարդանյանի սպանությանը, որում մեղադրվում է նրա ամուսինը՝ Գյումրի քաղաքի բնակիչ Վ. Մ.-ն: Այս 3 գործերն էլ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան: Մյուս դեպքերը՝ 2021թ. սեպտեմբերի 24-26-ն ընկած ժամանակահատվածում՝ չպարզված օրը Ցողիկ Մադոյանի սպանությունը, որում մեղադրվում է նրա դուստրը՝ իր հետ համատեղ բնակվող Կ. Մ.-ն, ինչպես նաև 2021թ. դեկտեմբերի 28-ին Գյումրի քաղաքի Բագրատուկյաց 2/11 հասցեում գտնվող խանութ-սրահում Անահիտ Իսկանդարյանին սպանելու դեպքը, որում մեղադրվում է Գ. Մ.-ն, գտնվում են նախաքննության փուլում: Արձանագրված սպանությունների դրդապատճառների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանց մեծ մասը կատարվել են կենցաղային բնույթի հարցերի պարզաբանման ընթացքում ծագած վիճարկությունների պատճառով: Մեկ դեպքում՝ այսպես կոչված, արդարությունը սեփական ձեռքերով վերականգնելու դրդապատճառով, իսկ մեկ դեպքում էլ սպանությունը կատարվել է հոգեպես ոչ առողջ, անմեղաունակ անձի կողմից: Ցանկանում եմ շեշտել, որ յուրաքանչյուր դեպքով վեր են հանվում դրանց ծնող, նպաստող պատճառները, պայմանները, որոնք ենթարկվում են մանրամասն ուսումնասիրության: Չնայած արձանագրված սպանության դեպքերի քանակին՝ իրավիճակը վերահսկելի է: Ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ՝ հանցագործությունները կանխարգելելու ուղղությամբ: -Կատարված սպանությունների մեջ հիշատակեցիք նաև Ամանորին ընդառաջ Գյումրու կենտրոնում տեղի ունեցած դաժան սպանությունը. օրը ցերեկով իր խանութում կտրել էին Անահիտ Իսկանդարյանի կոկորդը: Որպես նախնական վարկած՝ շրջանառվեց նրա հետ փողային հարաբերությունները ունենալը: Սակայն սա գյումրեցիներից շատերի մոտ անհավատալի թվաց այն առումով, որ տարիներ առաջ իր նշանադրության օրը դաժանաբար սպանել էին նրա որդուն՝ Կարեն Եսայանին, և մայրը մինչև իր սպանությունը փորձում էր սեփական հետաքննությունն անցկացնել ու բացահայտել որդու սպանության իրական հանգամանքները: Ի՞նչ ընթացքում է այս գործը, արդյոք կա՞ն այլ վարկածներ սպանության: -Հիշյալ քրեական գործով կատարվում է նախաքննություն, 1 անձի առաջադրված է մեղադրանք, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառված կալանավորումը: Ինչ վերաբերում է Անահիտ Իսկանդարյանի սպանության վարկածներին, ապա գործի քննության ընթացքում առաջ են քաշվել մի քանիսը, որոնք հաստատելու կամ հերքելու ուղղությամբ ձեռնարկվում են համագործակցված դատախազական, քննչական և օպերատիվ-հետախուզական անհրաժեշտ միջոցառումներ: Ձեռնարկվող միջոցառումները հրապարակելը նպատակահարմար չէ, իհարկե, ելնելով նախաքննության շահերից: Քրեական գործով մի շարք քննչական և դատավարական գործողություններ կատարելու, ինչպես նաև մի շարք հանգամանքներ օպերատիվ եղանակով պարզելու նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու համար քրեական գործի մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից նախաքննության և հետաքննության մարմիններին տրվել են գրավոր ցուցումներ: -Շիրակի մարզը տարիներ շարունակ պաշտոնապես համարվում է ամենաաղքատը, իսկ աղքատությունը երբեմն պատճառ է դառնում գողությունների կատարման: Ի՞նչ պատկեր ունենք այս առումով, ավելացե՞լ է, թե՞ նվազել գողությունների թիվը: Բնակարանային գողությունների բացահայտման ի՞նչ ցուցանիշ ունենք: -2021թ. ընթացքում մարզում արձանագրվել է գողության 212 դեպք՝ նախորդ տարվա 252 դեպքի դիմաց, այսինքն՝ դեպքերը նվազել են 40-ով կամ 15.9%-ով: Ընդ որում՝ աճել է բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 47.2 % նախորդ տարվա 39 %-ի դիմաց: Նախորդող տարվա 65 դեպքի դիմաց 2021թ. գրանցվել է բնակարանային գողությունների 37 դեպք: Այսինքն՝ ունենք նվազում 28 դեպքով կամ 43.1%-ով: Խիստ կարևոր համարելով բնակարանային գողությունների բացահայտման և նախականխմանն ուղղված միջոցառումները՝ դատախազության նախաձեռնությամբ դեռևս 2019 թվականին իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ, որոնք ևս նպաստել են գողությունների թվաքանակի նվազմանը: Մասնավորապես՝ գրություններ են հասցեագրվել Շիրակի մարզպետին և ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետին, որոնցով անհրաժեշտություն է համարվել հնարավորինս սեղմ ժամկետում համայնքների ղեկավարների, ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության և ենթակա ստորաբաժանումների ղեկավար անձնակազմի հետ համատեղ քննարկել բարձրացված խնդրի լուծմանն ուղղված գործողությունները: Մասնավորապես՝ բնակարանային գողությունների համար ռիսկային համարվող քարտեզագրված բնակավայրերը, կամ դրանց թաղամասերում ուժեղացնել ոստիկանական հսկողությունը, բազմաբնակարան շենքերի մոտակայքը և դրանց մուտքերը զինել տեսախցիկներով, ինչպես նաև այդ շենքերի մուտքերի դռները կահավորել հատուկ կողավորվող փականներով: Այն մի կողմից նպաստում է բնակարանային գողությունների թվի նվազմանը, մյուս կողմից կապահովի համայնքների բնակիչների գույքի անձեռնմխելիությունը: Ի դեպ, նույնաբովանդակ գրություն էլ 2021 թվականի հոկտեմբերի 4-ին է ուղարկվել Գյումրու քաղաքապետին: Կատարված հետևողական աշխատանքների արդյունքում 2021 թվականի ապրիլի 1-ից մինչև նույն թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում մարզի՝ բնակարանային գողության համար որպես ռիսկային համարվող, կամ թաղերի երթուղիներ համարվող տեղանքներում՝ բազմաբնակարան շենքեր մուտք գործող խաչմերուկներ, հրապարակներ, զվարճանքի կենտրոններ, առանձնատներ մուտք գործող ճանապարհներ և այլ անհրաժեշտ վայրեր, տեղադրվել է 269 տեսախցիկ: Այն ընդգրկում է ինչպես մարզկենտրոն Գյումրին, այնպես էլ Արթիկը, Ախուրյանը, Ամասիան, Աշոցքը: Նաև Գյումրու քաղաքապետը մեր գրությանն ի պատասխան՝ հայտնել է, որ Գյումրի քաղաքի Անի թաղամասի 9 շենքերում տեղադրվել է 24 տեսախցիկ, իսկ շենքերի դռներին՝ կողավորվող փականներ, 24 նախադպրոցական ուսումնական հաստատություններում տեղադրվել են տեսախցիկներ և ազդանշանային անվտանգության

համակարգեր, 5 տեսանկարահանող սարքեր տեղադրվել է Գյումրու Վարդանանց հրապարակում: Բնական է, որ տեսախցիկների տեղադրումը նպաստում է նաև այլ բնույթի հանցագործությունների բացահայտմանը: Եվ մեր խնդիրն առաջիկայի համար շարունակելու է մնալ ինչպես տեսախցիկների, այնպես էլ կողավորված փականների տեղադրման աշխատանքների շարունակումը, հսկողությունը քարտեզագրված և ռիսկային գոտիներում ոստիկանության ուժեղացված պարեկային ծառայություն իրականացնելու նկատմամբ: -Շիրակի մարզում արդիական է նաև ավտոմեքենաներից կատարված գողությունների թեման: Այս մասին ևս կխնդրեինք մանրամասներ ներկայացնել: -Շիրակի մարզի դատախազությունում ուսումնասիրվել են 2021 թվականի ընթացքում մարզի վարչական տարածքում արձանագրված՝ ավտոմեքենաներից կատարված հափշտակության դեպքերը, ինչի արդյունքում պարզվել է, որ քննարկվող ժամանակահատվածում կատարվել են գողության 23 դեպքեր: Արձանագրված հիշյալ դեպքերի գերակշռող մասը չի բացահայտվել: Մտահոգիչ համարելով ավտոմեքենաներից կատարված գողությունների ճնշող մեծամասնության չբացահայտված լինելու հանգամանքը՝ իմ կողմից 3 միջնորդագրեր են ուղարկվել ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետին՝ ոստիկանության ծառայությունների աշխատանքներն ավելի ինտենսիվացնելու, ավտոմեքենաներից կատարված գողությունների համար առավել կրիմինոգեն վայրերը պարեկապահակետային ծառայության կողմից հատուկ ուշադրության տակ պահելու, գողության կամ համասեռ հանցագործության կատարման համար նախկինում դատված անձանց օպերատիվ տեսադաշտում պահելու, ինչպես նաև իրենց պարտականությունների նկատմամբ պատասխանատու վերաբերմունք դրսևորելու, հանցագործությունների բացահայտման և կանխարգելման գործում առավել հետևողական լինելու պահանջներով: Միջնորդագրերի քննարկման արդյունքում ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետի կողմից ենթակա ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվել է գույքի հուսալի պահպանության կանոնների վերաբերյալ բնակչության շրջանում պարբերաբար տանել բացատրական աշխատանքներ, քրեաբանական վերլուծության ենթարկել արձանագրված հանցագործությունների դեպքերը՝ մանրամասն ուսումնասիրելով կատարման հանգամանքները, արտաքին ծառայության վերակարգերի երթուղիները մոտեցնել հանցագործությունների կատարման հավանական վայրերին: Շիրակի դատախազի հետ գրուցել ենք նաև պաշտոնական դիրքի չարաշահման դեպքերի, առողջապահական ոլորտում արձանագրված կոռուպցիոն դեպքերի, դրանց բացահայտումների, ծանր վիրավորանք հասցնելու մեղադրանքով հարուցված քրգործերի մասին: Այս թեմաներին կանդրադառնանք քիչ անց: Նունե ԱՐԵՎԵՍՏԱՆ

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2022/02/16/1247987/>

Asparez.am

Գյումրիում հերթական անգամ ճշգրտվում է տնակների ու անթեանների թվաքանակը

21 February, 2022 18:02



Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանի պաշտոնավարման 100-րդ օրն ամփոփվեց ոչ պաշտոնական միջավայրում: Մամուլի ասուլիսի վայր ընտրվել էր Շիրակի մարզի ցրտաշունչ Լեռնակերտ վարչական բնակավայրի մշակույթի տունը:

Ապակենտորացման խնդիրը լուծելու նպատակով կշարունակվեն միջոցառումներն անցկացնել ոչ թե Գյումրիում, այլ մարզի տարբեր համայնքներում ու բնակավայրերում:

«Ինձ մշտապես պատկերացրել եմ օրենսդիր դաշտում, բայց, կարծում եմ, որ այս հարյուր օրերի ընթացքում որոշակի ձեռագրային սկզբունքներ եւ աշխատելու լարձ կարողացել եմ ցուցադրել նաև գործադիր ոլորտում: Այն կատարված աշխատանքը, որը տեսանելի, նկատելի եղել է, առավելապես եղել է թիմի աշխատանք եւ եթե ունեցել ենք հաջողություններ եւ անհաջողություններ, դա, բնականաբար, մի ամբողջ կառույցի, ենթակա կառույցների եւ, ինչու չէ, նաև ժողովրդի փոխգործակցության արդյունք է», -ասաց մարզպետը:

Շիրակի մարզն իր աղքատության եւ գործազրկության ցուցանիշներով դարձյալ, այսպես ասած, մնում է առաջատար:

Մարզի եւ երկրի պետության խնդիրներից է մնում գերեվարված անձանց հայրենադարձումը: 2020 թվականին պատրեազմից հետո Խձաբերդից գերեվարված շիրակցի 62 անձանցից դեռևս վերադարձել է 32-ը: Այս խմբից մինչև այսօր 30 գերի էլ պահվում է Բաքվի բանտում: Մարզպետի խոսքով՝ ջանք ու եռանդ չի խնայվելու, որպեսզի նրանք եւս օր առաջ վերադառնան հայրենիք:

Շիրակի մարզում կա 91 վթարային շենք, որոնցից 8-ը՝ Գյումրիում: 1988 թվականի երկրաշարժից հետո այս վթարավտանգ շենքերում մասնակի փլուզումներ հաճախ են լինում: Գյումրիում վերջին երկրաշարժից հետո վթարային շենքերի խնդրին արձագանքել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեն: Ըստ մարզպետի՝ կոմիտեի աշխատակիցներն այցելել են Անտառավան 26 շենք, ծանոթացել շենքային պայմաններին, գրուցել բնակիչների հետ, ապա անհրաժեշտ փաստաթղթերն ուղարկվել են Քաղաքաշինության կոմիտե:

Մարզպետ Ն.Բաղդասարյանի խոսքով, այս շենքի սեփականատերերին հատկացվելու են Բնակարանների գնման վկայականներ:

«Լիահույս եմ, որ այս հաջողությունը կունենանք, մնացած վթարային շենքերը՝ Ղանդիլյան, Հանեսոլյան փողոցների, Իսահակյան 9 շենքի, Տիգրան Մեծի 5 շենքի ճակատագրերի հարցը քննարկման փուլում են: Բնակիչներն ուզում են ամրացնել իրենց շենքը, օրինակ, Իսահակյան 9 շենքը, Բայց, հաշվի առնելով շենքի կառուցվածքը, ամրացումը շատ ծախսատար է դառնում, երբեմն՝ ոչ արդյունավետ»:

Նշված վթարային շենքերն ունեն 3-րդ, 4-րդ կարգի վթարայնության աստիճան, միաժամանակ երկար տարիներ չի կատարվել այդ շենքերի անձնագրավորման գործընթացը:

«Կառավարության 5-ամյա զարգացման ծրագրով մինչև 2026 թվականը նախատեսված է, որ այդ շենքերի խնդիրները 70 տոկոսով պետք է լուծվի: 2024 թվականից վթարային շենքերի ամբողջական ծրագիրը մեկնարկվելու է: Այս փուլում շենքերի անձնագրավորման եւ օրենսդրական որոշակի փոփոխությունների խնդիր է քննարկվում»:

Գյումրիում հերթական անգամ ճշգրտվում են տնակների, անօթեւանների թիվը: Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքի անշարժ գույքի կառավարման բաժնի պետի ժամանակվոր պաշտոնակատար է նշանակվել «Գյումրին առանց տնակների» հիմնադրամի տնօրեն Գեորգ Գրիգորյանը: Ն.Բաղդասարյանի խոսքով, վերջինս, լավ է տիրապետում անօթեւանության խնդրին եւ տնակների, անօթեւանների ճշգրտված պատկերը հստակ կլինի առաջիկա 1-2 ամսում:

Համադրելու են տեղեկությունները քաղաքապետարանի բազայի հետ, որից հետո ճշգրտված թիվն ուղարկվելու է մարզպետարան: Մարզպետի խոսքով՝ անօթեւանների խնդիրը քննարկվել է նաեւ վերջերս՝ ՀՀ վարչապետի, Գյումրի համայնքի ղեկավարի եւ Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի հանդիպման ընթացքում եւ վարչապետը հորդորել է անօթեւանների վերջնական թիվ տալ :

Ճշգրտված թիվն ունենալուց հետո որոշվելու է անօթեւանության խնդրի լուծման մոտեցումներն ու տարբերակները:

Գյումրիում կան փաստացի անօթեւաններ, որոնք ժամանակին բնակարան ստացել են պետությունից, բայց սոցիալական խնդիրներից էլնելով վաճառել են եւ հայտնվել տնակում եւ չունեն անօթեւանի կարգավիճակ: Մարզպետի խոսքով՝ այս դեպքում հակված են առաջ գնալ սոցիալական բնակարանների տրամադրման ճանապարհով:

Միաժամանակ կան անօթեւաններ, որոնք ունեն կարգավիճակ, ապրում են տնակներում, երկրաշարժի հետեւանքով կորցրել են բնակարան, սակայն տարբեր խնդիրների պատճառով դեռեւս նոր բնակարան չեն ստացել:

Քիչ չեն նաեւ դատական կարգով անօթեւան ճանաչված եւ այսօր տնակում ապրող քաղաքացիները:

Առաջիկա օրերին ԱԺ-ի որոշ պատգամավորներ այցելելու են Գյումրու տնակային ավաններ, իրենց աչքով տեսնելու տնակային ավան, տնակային պայման ասվածը:

Գյումրու Մուշ թաղամասում կառուցվող շենքերում որոշ սոցիալական խմբեր բնակարանամուտ կնշեն գարնանը: Շենքերը կառուցվում են Հայաստան համահայկական հիմնադրամի միջոցներով, ներկայում հստակեցվում են շահառուների ցուցակը: Մարզպետի խոսքով՝ այս նորակառույց շենքերի 20 եւ ավելի բնակարաններ կհատկացվեն 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների այն ընտանիքներին, որոնք ունեն բնակարանային խնդիրներ:

Հիմնադրամը Գյումրիում շարունակվելու է շենքերի կառուցապատման ծրագիրը: Նախատեսվում է 60-70 բնակարան կառուցել հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Հիմնադրամի միոցներով Մուշ թաղամասում կառուցվելու է նաեւ մանկապարտեզ:

Անի Մկրտչյան

Ամասիայում վիճարկում են ՏԲՄ արդյունքները, տուժում են բնակիչները



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

2021 թվականի դեկտեմբերի 5-ի ՏԻՄ ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից առաջադրված թեկնածու Մերգել Ղարիբյանի թիմը 18 ձայն ավելի էր հավաքել, քան «Արփի-Ամասիա» դաշինքի ղեկավար Ջեմմա Հարությունյանի թիմը: 2 քաղաքական ուժերն էլ ստանալու էին ավագանու 6-ական մանդատ, բայց անսպասելիորեն Մերգել Ղարիբյանի կողմնակիցներն հրաժարվեցին իրենց մանդատներից, ավագանու ցուցակի բոլոր 32 թեկնածուներն էլ ինքնաբացարկ հայտնեցին՝ վստահ լինելով, որ ընտրությունների արդյունքները կչեղարկվեն: Բայց դա այդպես չեղավ ու 15-ի փոխարեն Ամասիայում ավագանի ձևավորվեց 9 անդամով՝ 3-ը ՀՀԿ-ից, 6-ը՝ «Արփի-Ամասիա» դաշինքից, իսկ նրանք միաձայն համայնքի ղեկավար ընտրեցին Ջեմմա Հարությունյանին:

Մերգել Ղարիբյանը 2 ամիս է՝ բողոքարկում է Ամասիայի ընտրությունների արդյունքները: Վարչական դատարանի մերժումից հետո, վերաքննիչ դատարան է բողոք ներկայացրել ու սպասում է: Նրա հետ էլ նախկին Արփի համայնքի 9 գյուղերի բնակիչները: Նրանք թույլ չեն տալիս Մերգել Ղարիբյանին համայնքապետարանի փաստաթղթերը հանձնել նոր ղեկավարին: Պնդում են, թե իրենց համայնքում ընտրողների 90 տոկոսը Մերգել Ղարիբյանին է քվե տվել ու նա էլ պետք է ղեկավարի, իսկ իրենք բնակիչներով թույլ չեն տա, որ իրենց ձայները փոշիանան: Մինչև սահմանադրական դատարան կհասնեն:

Բնակիչների խոսքով՝ Մերգել Ղարիբյանը պաշտոնավարման նախորդ 5 տարիներին համայնքում շատ գործ է արել, գյուղերը տարիներով խմելու ջուր չեն ունեցել, նա մի շարք ծրագրերով նոր ջրագծեր է տեղադրել, խմելու ջրի խնդիրը լուծել, անասունների արոտավայրերն է ջրարբիացրել և այլն: Բնակիչներն իրենց գյուղապետին են ուզում ու ըստ նրանց, այնքան ժամանակ կլինեն միասնական, մինչև կամ Մերգել Ղարիբյանը ղեկավարի, կամ էլ Արփին անջատեն Ամասիայից:

Մերգել Ղարիբյանն էլ «Ասպարեզի» հետ գրույցում ասում է, որ ինքը բնակիչներին դեմ չի գնա, փաստաթղթերը չի հանձնի ու կսպասի այնքան, մինչև ստացվի դատարանի որոշումը:

Արփի համայնքի փաստաթղթերը նոր ղեկավարին չփոխանցվեցին նաև ոստիկանների միջնորդությունից հետո:

Իսկ կրկնակի խոշորացված համայնքի նոր ղեկավարներն արդեն 3 անգամ եկել են Արփիի նախկին վարչական կենտրոն՝ Բերդաշեն՝ փաստաթղթերն ընդունելու: Ըստ Ջեմմա Հարությունյանի՝ առանց նախապես տեղյակ պահելու, ինքն հանգիստ մուտք է գործում Բերդաշեն, գրուցում բնակիչների հետ, նրանք էլ ասում են, թե փաստաթղթերը պատրաստ են, բայց մինչև Մերգել Ղարիբյանի թույլտվությունը չլինի, դրանք հանձնել չեն կարող: Իսկ երբ Ջեմմա Հարությունյանն իր այցի մասին տեղյակ է պահում նախկին ղեկավարությանը, ասում է, բնակիչներն հավաքվում են ու իրեն թույլ չեն տալիս մուտք գործել նախկին համայնքապետարանի շենք:

Վերջին այցի ժամանակ ոստիկաններն էին հասարակական կարգ պահպանում: Ջեմմա Հարությունյանը նրանց էր դիմել ընդունման-հանձնման հանձնաժողովի անվտանգությունն ապահովելու համար: Բայց ոստիկանների ներկայությամբ էլ ոչինչ չփոխվեց. Ջեմմա Հարությունյանն անգամ ավտոմեքենայից դուրս չեկավ, ընդունում-հանձնումն էլ չկայացավ: Ըստ Ջեմմա Հարությունյանի, փաստաթղթերի ընդունումը 1 օրվա գործ չէ, առնվազն 1 շաբաթ կտևի, քանի որ Արփի համայնքի հաշվեկշռում գյուղտեխնիկա և այլ սարքավորումներ էլ կան: Նրա խոսքերով, այս քաջքուկներից, գործն է տուժում: Բնակիչներին տեղում տեղեկանք չեն կարող տրամադրել, քանի որ համայնքապետարանի նախկին կնիքն անվավեր է, հողի հարկի և գույքահարկի վարձավճարները բանկի միջոցով բնակիչները փոխանցում են:

Մերգել Ղարիբյանի և Արփի համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարների լիազորությունները դադարեցված են: Համայնքային բյուջեի միջոցներն էլ նախկին ղեկավարը տնօրինել չի կարող, դրանք արդեն միացվել են Ամասիայի բյուջեին: Բայց Արփիում նախկին ղեկավարությունը համայնքապետարանի տեխնիկայով բնակիչների դռներն էր մաքրում ձյունից ու փորձում օգտակար լինել այլ հարցերում ևս:

Նոր համայնքապետը պետք է վարչական նոր դեկավարներ նշանակի, բայց դա էլ չի կարող անել: Ըստ Ջեմմա Հարությունյանի՝ ինքը պետք է գյուղերով շրջի, բնակիչների հետ հանդիպի, որ կարիքներն իմանա ու սուբվենցիոն ծրագրեր կազմի, բայց գյուղեր մուտք գործել չի կարող:

Ի դեպ, նախկին Արփի համայնքում տեղական բյուջեի ենթակայության ոչ մի կազմակերպություն չկա. ոչ մանկապարտեզ, ոչ մարզադպրոց, ոչ արվեստի կամ երաժշտական դպրոց, ոչ էլ գրադարան:

Արփի համայնքը Ամասիայի շրջանի հեռավոր գյուղերն է ընդգրկում, այստեղ գտնվում է Կովկասի ամենացուրտ վայրը՝ Պաղակն բնակավայրը, որտեղ տարիներ առաջ մինչև 46 աստիճան ցուրտ է գրանցվել:

Հիմա առանց բնակիչների հետ քննարկման, նորնտիր դեկավարությունը որոշել է Ջորակերտ համայնքում սուբվենցիոն ծրագրով մանկապարտեզ հիմնել: Ծրագիր է ներկայացնելու, որ ծախսերի մի մասը պետական, մյուս մասն էլ տեղական բյուջեներից հատկացվի:

Համայնքի ներկա և նախկին դեկավարների հետ ունեցած տարաձայնությունների պատճառով, ըստ Արփիի բնակիչների, 9 գյուղերը ավելի քան 10 օր գիշերային լուսավորությունից զրկված են եղել, մթության մեջ էլ գայլերը հարձակվել, գյուղերի շներին են հոշոտել:

Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Արամ Անտոնյանն էլ «Ասպարեզի» հետ զրույցում ասում է, որ ընտրություններից հետո Ամասիա համայնքում, իրոք, որոշակի խնդիրներ կան, բայց նորընտիր դեկավարի միջոցով փորձ է արվում առանց խոչընդոտների գործն առաջ տանել: Ըստ նրա, այլևս Արփի և Ամասիա առանձնացված համայնքներ չկան, կա միասնական 1 համայնք՝ Ամասիա: Իսկ խոչընդոտներն հաղթահարելու համար ժամանակ է հարկավոր:

Բնակիչների այն պնդումներին, թե Արփին նորից առանձնացվի Ամասիայից ու դառնա ինքնուրույն համայնք, ըստ Արամ Անտոնյանի, դա արդեն պետական քաղաքականության արդյունքում պետք է արվի: Բայց եթե որոշվել է այս մոդելը, ապա սա պիտի շարունակվի, թեկուզև կարող է այն բնակիչների ցանկությունների հետ չհամընկնել: Գուցե տարիներ հետո պետության քաղաքականությունը փոխվի ու համայնքների ապախոչորացում տարվի, սա արդեն, ըստ պատասխանատուի, ժամանակի հարց է ու տարիների ընթացքում պետք է համոզվել՝ գործընթացն հաջողվա՞ծ էր, թե՞ ոչ:

Կարինե Կազարովա

Շիրակի անտեսված գյուղը. Շաղիկ

[14 February, 2022 16:02](#)



Շիրակի մարզում համայնքների խոչորացման հերթական, ու, հավանաբար, վերջին գործընթացն ավարտված է: Գործընթացը միտված է փոքր ու մեծ բնակավայրերի համաչափ զարգացմանը:

Գյուղերի փոքր բյուջեները կկենտրոնացվեն մի տեղ ու միասնական բյուջեից կկատարվեն ծախսերը բոլորի համար՝ առանց խտրականության. սա է խոչորացման տրամաբանությունը: Շաղիկ բնակավայրը խոչորացումից առաջ էլ, հետո էլ անտեսված ու մեկուսի էր Արփի համայնքի ամենահեռավոր գյուղը Շաղիկն է, որը Գյումրի համայնքից հեռու է 41 կմ: Սահմանակից է միանգամից և՛ Վրաստանին, և՛ Թուրքիային: Հարևան 2 պետություններից ընդամենը 1 ու կես կմ է հեռու:

Սահմանամերձ Շաղիկում բնակիչների համար արտոնություններ չկան, ապրում են մեկուսացածի կարգավիճակում՝ ձմռանը առատ ձյունն ու բուքն են արտաքին աշխարհից կտրում, ամռանը՝ քարուքանդ ճանապարհները: Գյուղում արտագաղթը տևական է, Շաղիկում ընդամենը 23 բնակիչ է ձմեռել այս տարի:

Բնակիչներն ասում են, որ թեպետ խոշորացման գործընթացից սպասելիքներ են ունեցել, բայց գյուղի բարեփոխումը չեն տեսնում: «Ոչ մի գյուղացի իր կենսապայմաններում չզգաց փոփոխություն դեպի լավը», - միակարծիք են նրանք:

Գյուղի բնակիչ Մարգարիտ Բեգինյանը, ով Շաղիկի դպրոցի միակ ուսուցչուհին է, ասում է, որ միգրացի վատն ավելի շատ էր, դրա համար լավը չտեսան: Գյուղում, ըստ նրա, ոչ մի ծրագիր չի եղել, ընդհակառակը, այս կենտրոնացումից իրենց վիճակն ավելի է վատացել: Գյուղի ամենամեծ խնդիրը ճանապարհների վատ վիճակն է: Կես ժամվա ճանապարհը 2 ժամում են մեքենաները հաղթահարում: Շաղիկում վերջին ծրագիրը, կամ բարեկարգումը, ըստ բնակիչների, եղել է 1990-ականներին, երբ ռուս շինարարները վերականգնման աշխատանքներ են կատարել:

Տարին 7-8 ամիս Շաղիկում ձմեռ է, հացահատիկ չի աճում, բույսի վեգետացիոն շրջանը շատ կարճ է, միայն խոտ են քաղում ու անասնապահությամբ զբաղվում: Այս պայմաններում, ըստ գյուղացիների, պետական աջակցություն պետք է լինի, որ գյուղը չդատարկվի:

Անասնապահությունից է միակ եկամուտը, հիմնականում կաթ են մթերում, ինչն էլ, ըստ շաղիկցիների, ջրի գնից էլ էժան են տանում՝ 1 լ-ը 150 դրամով:

«Իմ անարատ կաթը տալիս եմ քաղաքացուն, ինքն ավելի շատ է գումար աշխատում, քան ես: Պաղպաղակն իրենից ի՞նչ է ներկայացնում, իմ կաթից թանկ է», - ասում է Անահիտ Մարուխանյանը և ավելացնում. «Պարզապես ցանկալի է, որ կաթի մթերման գները բարձրացնեն, քանի որ անասունի կթվելու սեզոնը մեզ մոտ շատ կարճ է՝ 2-3 ամիս: Խոտքաղի ծախսերն էլ թանկ են: Հազիվ 0-ական վիճակի ենք գալիս: Նոր տարվան ոսկեդեղն ենք գրավ դնում բանկերում՝ Նոր տարի նշում, հետո փակվում. մեկից պարտքով գումար վերցնում մյուսին տալիս, մյուսից՝ 3-րդին»:

Շաղիկի բնակիչների խոսքով, անցած տարի խոտքաղն էլ վատ է եղել, իրենց դաշտերն հիմնականում գտնվում են սահմանային գոտում և ռուս սահմանապահների թույլտվությունն է պետք, որ մուտք գործեն տարածք՝ խոտ քաղելու: Բսկ անցած տարի սահմանապահ ուղեկալից թույլտվությունը ուշ է ստացվել ու խոտը ժամանակին չեն կարողացել քաղել, մնացել է ձյան տակ: Ուշ քաղածն էլ, ըստ բնակիչների, արդեն սևացած է եղել ու հիմա անասունը չի ուտում: Խոտը թափում են, անասունն էլ՝ նիհարում:

«Անասունները հիմա կիսատված են, հազիվ ենք ոտքի վրա կանգնեցնում: Ահավոր տարի էր անցած տարին: Կյանք ու մահու կռիվ էր, ով պայքարեց՝ հաղթեց, ով չէ՝ չէ: Դիզվառելանյութն էլ թանկ էր: Նույնը նաև այս տարի կլինի: Ես ինչքա՞ն կաթ վաճառեմ 150 դրամով, որ կարողանամ ամբողջ ձմեռվա խոտը քաղել, պահեստավորել», - ասում է Մարգարիտ Բեգինյանն ու տեղեկացնում. «Մեր տնամերձից սովորաբար 700-800 հակ խոտ էինք քաղում, անցած տարի հազիվ 50 հակ ենք քաղել: Խոտ չլինելու պատճառով աշունն էլ ստիպված էինք անասուններին հարկադիր մորթի ենթարկել, գյուղի անասունները կես ընկան: Ես 40 գլուխ խոշոր եղջերավոր ունեի, մնացել է 27-28-ը: Մյուս կողմից էլ գայլերն իրենց սև գործն արեցին: Ոհմակներով հարձակվում էին հորթերի, ցուլերի վրա, կոտորում: Մի ոհմակում մինչև 15 գայլ տեսնող է եղել գյուղում: Մենք ոչխար չենք պահում, գայլերը խոշոր անասուններին են հոշոտում: Ամեն տնից 2-3 անասուն գայլերը խփել են»:

Շաղիկը նորից ընդգրկվեց խոշորացման գործընթացում

Անցած տարվա դեկտեմբերի 5-ից հետո Շաղիկ գյուղն այլևս Արփի համայնքի բնակավայր չէ: Արփի համայնքը նորից է խոշորացվել ու միացվել Ամասիային: 2-րդ խոշորացումից հետո, Շաղիկը ևս 19 այլ բնակավայրերի հետ Ամասիայի կազմում է ընդգրկվել: Խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնը մոտ 2 ամիս է, ստանձնել է Ամասիայի նախկին համայնքապետ Ջենմա Հարությունյանը: Իրավաբանորեն նա է ղեկավարը, բայց փաստացի չի կարողանում ղեկավարել: Արփիի նախկին համայնքապետ Մերգել Ղարիբյանը հրաժարվում է նոր ղեկավարին փոխանցել 9 գյուղերի փաստաթղթերը: Ընդունման-հանձնման գործընթացին նաև ոստիկաններն են միջամտել, բայց արդյունք դեռ չկա:

Կարինե Կազարովա

Գյուղում մանկապարտեզների բուժքույրերը կառավարությանը խնդրում են վերանայել հաստիքացուցակը

11 February, 2022 21:02

ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատություններում հաստիքային միավորների քանակը կախված է տվյալ հաստատությունում առկա խմբերի թվից: Հաստիքացուցակն հաստատվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով, իսկ դրույքաչափերը սահմանում է տվյալ համայնքի ավագանին:

Մասնավորապես, 1 եւ 2 խումբ ունեցող նախադպրոցական հաստատությունն ունի բուժքրոջ 0,5, 3 եւ 4 խմբերը՝ 0,75, իսկ 5-12 խումբ ունեցող մանկապարտեզներն ու նախակրթարանները՝ 1 դրույքի հաշվով հաստիքներ:

Մեկ դրույքի չափը հաստատվում է համայնքի ավագանու կողմից: [Գյումրու ավագանին, օրինակ, 2021 թվականի դեկտեմբերի 27-ի 282-Ա որոշմամբ հաստատել է](#) ՀՈԱԿ-ների հաստիքացուցակները եւ բուժքրոջ մեկ դրույքաչափը սահմանել 95 հազար ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:

0,5 դրույքի դեպքում բուժքրոջ աշխատավարձը սահմանված է 47.500 ՀՀ դրամ, իսկ 0,75 դրույքի դեպքում՝ 71.250 ՀՀ դրամ: Այս գումարները եւս ներառում են բոլոր տեսակի հարկերը: Նույն այս դրույքաչափը սահմանված է նաեւ մեթոդիստի, հաշվապահի, երաժշտական դեկավարի հաստիքների համար, սակայն, հատկապես համավարակի պայմաններում, բուժքույրերի աշխատանքն ավելի ծանրաբեռնված է: Հետաքրքիրն այն է, որ դոնապանի, օժանդակ բանվորի մեկ դրույքաչափը ընդամենը 1700 դրամով է պակաս սահմանել Գյումրու ավագանին՝ 93.300 ՀՀ դրամ, այն դեպքում, երբ վերջիններս ավելի քիչ ծանրաբեռնվածություն ունեն, քան բուժքույրերը:

Կախված դրույքի չափից՝ որոշված է բուժքրոջ աշխատանքային ժամերը: 0,5 դրույք ծանրաբեռնվածություն ունեցող բուժքույրն ամեն օր աշխատում է 4 ժամ, շաբաթական՝ 5 օր, 0,75 դրույք ծանրաբեռնվածության դեպքում՝ 5-6 ժամ, 1 դրույքի դեպքում՝ 8 ժամ, այսինքն այնքան, որքան աշխատում է մանկապարտեզը:

Բուժքույրերը պատմում են, որ իրենց բացակայության դեպքում երեխաների ինքնազգացողության վատացման դեպքեր արձանագրվում են, մանկապարտեզը կանչում է շտապօգնություն: Իսկ եթե նման դեպքեր գրանցվում են բուժքրոջ աշխատանքային ժամերին եւ ինքը հաստատությունում ներկա է լինում, վերջինս է երեխային առաջին բուժօգնությունը ցուցաբերում: Ամեն մանկապարտեզ ունի մեկ բուժքույր, բուժքրոջ բացակայության դեպքում պարտականությունները կատարում են դաստիարակն ու տնօրենը:

«Մենք այլեւս ֆիզիկապես չենք հասցնում համավարակի այս օրերին օրական երկու անգամ ջերմաչափել 108 երեխայի, գրառումներ կատարել մատյաններում, հասցնել կատարել ամեն ինչ կարճ ժամանակում: Կառավարությանը խնդրում ենք վերանայել հաստիքացուցակը եւ բոլոր մանկապարտեզներին, անկախ խմբերի քանակից, հատկացնել մեկ դրույքով բուժքրոջ հաստիք», -ասում է բուժքույրերից մեկն ու ավելացնում՝ մեկ դրույքով հաստիքային միավորի դեպքում կշահի եւ բուժքույրը, որը ամսական կստանա մոտ 20-21 հազար դրամ ավել գումար, ու երեխաները՝ նրանց ինքնազգացողության վատացման դեպքում իրենք տեղում կլինեն, կցուցաբերեն բուժօգնություն:

Եթե 0,75 դրույքի դեպքում բուժքույրն ամսական ստանում է 50-51 հազար դրամ աշխատավարձ՝ 6 ժամի դեպքում, ապա 1 դրույքի դեպքում ամսական կտրվածքով իր աշխատավարձը բարձրանալու է մոտ 20-22 հազար դրամով, եւ օրական ավել է աշխատելու երկու ժամ:

Այս տարբերակին համաձայն են մյուս բուժքույրերը. ասում են՝ 2020 թվականից՝ համավարակի պայմաններում իրենց մշտական պարտականություններին ավելացել են լրացուցիչ պարտավորվածություններ՝ ջերմաչափում, համավարակով պայմանավորված սանիտարիզի ենթակառուցվածքի պահպանում, այդ ամենի մասին գրառումներ մատյաններում, բանավոր զեկուցումներ վերադասներին եւ այլն: Գյումրիում գործող 24 համայնքային նախակրթարաններից ու մանկապարտեզներից 12 - ում են բուժքույրերն ավելի քիչ աշխատաժամանակով աշխատում, որը, ինչպես նշվեց, պայմանավորված է դրույքային միավորով: 1 դրույքով են աշխատում մյուս 12 մանկապարտեզների բուժքույրերը:

Անի Մկրտչյան

Գյումրու մանկապարտեզներին մատակարարվող որոշ ապրանքատեսակներ թանկացել են

[03 February, 2022 18:02](#)



Ինչպես ամեն տարի, այս անգամ եւս «Ասպարեզ» ակումբը փորձել է պարզել, թե Գյումրու համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունները որ կազմակերպություններից, անհատ ձեռներեցներից են կատարում գնումներ եւ ինչ գներով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարեցտարի գնվող եւ մատակարարվող ապրանքատեսակների գինը բարձրանում է, սա հիմնականում պայմանավորված է երկրում առկա գնաճով: Միեւնույն ժամանակ, գնումների գործընթացում որոշ ապրանքատեսակների գներ շարունակում են անհասկանալի թվալ:

Մանրամթերքը թանկանում է, իսկ վարձավճարների չափը մնում նույնը, սա ենթադրում է, որ երեխաները մանկապարտեզներում ավելի քիչ չափաբաժիններով են սնվելու կամ որոշ սննդամթերքներից չեն օգտվելու:

Մյուս կարեւոր հանգամանքն այն է, որ միեւնույն սննդամթերքը տարբեր մանկապարտեզներ ու նախակրթարաններ ձեռք են բերում տարատեսակ գներով:

Գյումրու համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններում սննդի մատակարարման մրցույթները կազմակերպվել եւ անցկացվել են 2021 թվականի դեկտեմբերին: Հաստատությունները հաղթող կազմակերպությունների հետ սննդի մատակարարման վերաբերյալ կնքել են պայմանագրեր մեկ տարի ժամկետով: Մրցույթում հաղթել է այն կազմակերպությունը, որը տվյալ ապրանքատեսակի նվազագույն գնի հայտ է ներկայացրել:

Հարցված 3 մանկապարտեզից յուրաքանչյուրը ընթացիկ տարում սնունդ է ձեռք բերելու 4-5 կազմակերպությունից:

«Փարոս» մանկապարտեզի տնօրեն Արմինե Կարապետյանի խոսքով՝ հաստատությունը 5 կազմակերպության/ձեռներեցի հետ է կնքել պայմանագրեր՝ «Ռուզաննա Սարգսյան» ԱԶ, «ՄՈՎԱ» ՍՊԸ, «Կառլեն Սիմոնյան» ԱԶ, Թամարա Առաքելյան» ԱԶ, «Արմեն Ամբարդարյան» ԱԶ: Մանկապարտեզում ամենամսյա ծնողական վճարը 8000 ՀՀ դրամ է, որից 6500-ը ծախսվում է սննդի ձեռքբերման նպատակով:

Ընթացիկ տարում, ըստ կնքված պայմանագրերի, մանկապարտեզը հացի մեկ կգ-ը գնելու է 300 դրամով, 1 կգ կարտոֆիլը՝ 280, 1 կգ պանիրը՝ 2400, 1 կգ բրինձը՝ 580, 1 կգ կարագը՝ 3900 դրամով եւ այլն:

«Լիանա» մանկապարտեզը, ըստ տնօրենի պաշտոնակատար Մեղա Դարբինյանի, սննդի մատակարարման պայմանագրեր է կնքել «Թամարա Առաքելյան» ԱԶ-ի, «Կառլեն Սիմոնյան» ԱԶ-ի, «Ռուզաննա Սարգսյան» ԱԶ-ի, «Արմեն Ամբարդարյան» ԱԶ-ի եւ «ՄՈՎԱ» ՍՊԸ-ի հետ: հաստատությունը մեկ կգ հացը գնում է 300 դրամով, 1 կգ կարտոֆիլը՝ 280, 1 կգ պանիրը՝ 2450, 1 կգ բրինձը՝ 580, 1 կգ կարագը՝ 3300 ՀՀ դրամով եւ այլն:

Այս հաստատությունում եւս ամենամսյա ծնողական վարձավճարը, ավագանու որոշմամբ, սահմանված է 8000 ՀՀ դրամ, որից 6500-ը նախատեսված է սննդի ձեռքբերման նպատակով:

«Ժպիտ» մանկապարտեզի տնօրեն Արեւիկ Սահակյանի խոսքով՝ հաստատությունը սննդի մատակարարման պայմանագրեր է կնքել 4 ձեռներեց/կազմակերպության հետ՝ «Ռուզաննա Սարգսյան», «Արմեն Ամբարդարյան», «Թամարա Առաքելյան» ԱԶ-ների եւ «ՄՈՎԱ» ՍՊԸ-ի հետ: Մանկապարտեզն ընթացիկ տարում հացի մեկ կգ-ը գնելու է 300 դրամով, 1 կգ կարտոֆիլը՝ 300, 1 կգ պանիրը՝ 2150, 1 կգ բրինձը՝ 580, 1 կգ կարագը՝ 2800 ՀՀ դրամով:

Հաստատությունների տնօրենները եւս հաստատում են, որ սննդամթերքի գների աճ նկատվում է, ինչը պայմանավորում է երկրում առկա գնաճով, տեղեկացնում, որ բանջարեղենի գները բարձրացրել են նաեւ մատակարար ընկերություններն ու ձեռներեցները: Մասնավորապես, կարտոֆիլի մեկ կգ-ը մանկապարտեզները ընթացիկ տարում գնելու են 280-300 դրամով, թեպետ կենտրոնական շուկայում մեծածախ առետրի դեպքում միջին չափի կարտոֆիլն արժե 220-230 դրամ: Մյուս կողմից, տարվա մյուս եղանակներին կարտոֆիլի գինը նվազում է, մինչդեռ մանկապարտեզները, ըստ պայամագրի, այն դարձյալ ձեռք են բերելու 280-300 դրամով:

«Լիանա» մանկապարտեզում կարտոֆիլի մատակարարը «Թամարա Առաքելյան» ԱԶ-ն է: Մանկապարտեզի տնօրենի պաշտոնակատար Մեղա Դարբինյանն ասում է, որ մատակարարը գինը սահմանելիս պատճառաբանել է, որ կարտոֆիլի գինը բարձր է եղել նաեւ ամռան ամիսներին եւ հաշվի է առնվել այդ փաստը. այս դեպքում մանկապարտեզը չի առարկել: Նախորդ տարի, մեր հարցումների արդյունքում, Գյումրու համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունները կարտոֆիլի 1 կգ-ը գնում էին 170-190 ՀՀ դրամով:

Ինչպես նկատելի է, հացն ունի միասնական մեկ գին՝ 1կգ-ը՝ 300 դրամ, այն արդեն 5-6 տարի է՝ մատակարարում է մեկ ձեռներեց՝ «Ռուզաննա Սարգսյան»:

Մյուս սննդամթերքների (միեւնույն տեխնիկական բնութագիրն ունեցող) մատակարարները տարբեր են, նաեւ դրանով է պայմանավորված միասնական գին չլինելու հանգամանքը, թեպետեւ այս մասով դեռեւս կան անհասկանալի հարցեր: Մասնավորապես, Հաշվեքննիչ պալատն ուսումնասիրելով Գյումրու համայնքային նախադպրոցական հաստատությունների 2017-2018 թվականների նախահաշվային գները, եզրակացրել էր, որ նախահաշվային գների որոշման համար միասնական սկզբունք չի եղել: Ուսումնասիրության համար իրականացված գնումների շուրջ 80 ապրանքատեսակների ցանկերից առանձնացվել էին որոշակի ապրանքներ, որոնց նախահաշվային գների տարբերություններն առավել էին:

Օրինակ՝ տավարի տեղական փափուկ մսի 1 կգ-ի նախահաշվային գինը 2017 թվականին եղել է 2500-2800 դրամ, 2018 թվականին՝ 3000-3700 դրամ, դասական կաթնաշոռի 1 կգ-ի նախահաշվային գինը 2017 թվականին եղել է 1200-2250, 2018-ին՝ 1400-1800 դրամ, սերուցքային կարագի 1 կգ-ի նախահաշվային գինը 2017-ին եղել է 2000-3200 դրամ, 2018-ին՝ 2500-4550, շոկոլադապատ կոնֆետների 1 կգ-ի նախահաշվային գումարը 2017-ին եղել է 1200-2500 դրամ, իսկ 2018-ին՝ 1400-2500 եւ այլն:

Պալատն արձանագրել էր, որ նախահաշվային գների միասնական դիտարկման պարագայում հնարավոր կլիներ ապահովել խնայողությունների ավելի մեծ մակարդակ:

Անի Մկրտչյան

Գյումրի համայնքի ավագանու հերթական նիստ. նախագծեր

[02 February, 2022 19:02](#)



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի փետրվարի 08-ին ժամը 12:00-ին Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում (Վարդանանց հր. 1, 2-րդ հարկ, նիստերի դահլիճ) կկայանա Գյումրի համայնքի ավագանու հերթական նստաշրջանի առաջին նիստը: Ավագանու անդամների գրանցումը՝ սկսած ժամը 11:00-ից:

[Բեռնել նիստի օրակարգում ընդգրկված որոշումների նախագծերը, հավելվածները և այլ փաստաթղթերը](#)

Գյումրի համայնքի ղեկավար՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

Գյումրու ՀՈԱԿ-ների աշխատավարձերի բարձրացման հարց չի քննարկվում

[27 February, 2022 17:02](#)



ՀՀ-ում ջրի, էլեկտրաէներգիայի, առաջիկայում նաև գազի սակագների բարձրացման, գնաճի պայմաններում համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) աշխատավարձերը շարունակում են ցածր մնալ: ՀՈԱԿ-ների աշխատավարձերի դրույքաչափերը, հաստիքացուցակները հաստատում եւ սահմանում է համայնքի ավագանին: Դրույքաչափերի ու հաստիքների նախագծերը համայնքի ավագանուն ներկայացնում է համայնքապետարանի աշխատակազմը: Միեւնույն հաստիքային միավորի դրույքաչափը հնարավոր է տարբեր համայնքների ՀՈԱԿ-ներում լինեն տարբեր, այս տարբերությունը հիմնականում բացատրվում է համայնքի բյուջեի միջոցների առկայությամբ:

Գյումրիի համայնքի ՀՈԱԿ-ներում աշխատավարձերը շատ չնչին բարձրացան 2020 թվականին, երբ ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի չափը 55 հազարից դարձավ 68 հազար ՀՀ դրամ:

Գյումրիի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի 282-Ա որոշմամբ է հաստատվել ՀՈԱԿ-ների 2022 թվականի հաստիքացուցակները: Համաձայն այդ հաստիքացուցակների, օրինակ, ՀՈԱԿ-ների տնօրենների ամսական աշխատավարձը 110 հազար դրամ է, ուսմասվարինը՝ 100 հազար, գործավարի, տնտեսավարի, հավաքարարի, պահակի ամսական աշխատավարձը՝ մեկ դրույքը՝ 93.300, դասատուինը՝ 95 հազար դրամ, դերասանինը, ռեժիսորինը, բուժքրոջը, մեթոդիստինը եւս 95 հազար դրամ, դաստիարակինը՝ 119 հազար եւ այլն:

Նշված աշխատավարձերը ներառում են բոլոր տեսակի հարկերը: Ինչպես ՀՈԱԿ-ների աշխատողներն են ասում, հարկերը եւ տրանսպորտային ծախսերը դուրս գալով, իրենք ամսական ունենում են ընդամենը 80-50 հազար դրամ:

Որոշ աշխատակիցներ հույս ունեն, որ գնաճի պայմաններում համայնքների ավագանիները, նաեւ համայնքապետարանների աշխատակազմերը կվերանայեն այս դույքաչափերը: Գյումրու համայնքապետարանը, օրինակ, այս պահին աշխատավարձի բարձրացման հարց չի քննարկում:

Գյումրիի համայնքի ղեկավար Վարդգես Մամոնյանն Ասպարեզի հարցմանն ի պատասխան ուրբաթ օրը տեղեկացրել է, որ համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունների աշխատավարձերի բարձրացման հարց այս պահին չի քննարկվում:

Համայնքի ղեկավարը նաեւ տեղեկացրել է, որ առաջիկայում նախատեսվում է հայտարարել Գյումրիի համայնքի համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունների տնօրենների թափուր տեղերի համալրման մրցույթներ:

Ավելի վաղ հրապարակել էինք, որ Գյումրու մանկապարտեզների բուժքույրերը կառավարությանը խնդրում են վերանայել հաստիքացուցակը:

0,5 դրույքի դեպքում բուժքրոջ աշխատավարձը սահմանված է 47.500 ՀՀ դրամ, իսկ 0,75 դրույքի դեպքում՝ 71.250 ՀՀ դրամ: Այս գումարները եւս ներառում են բոլոր տեսակի հարկերը: Նույն այս դույքաչափը սահմանված է նաեւ մեթոդիստի, հաշվապահի, երաժշտական ղեկավարի հաստիքների համար, սակայն, հատկապես համավարակի պայմաններում, բուժքույրերի աշխատանքն ավելի ծանրաբեռնված է: Հետաքրքիրն այն է, որ դոնապանի, օժանդակ բանվորի մեկ դրույքաչափը ընդամենը 1700 դրամով է պակաս սահմանել Գյումրու ավագանին՝ 93.300 ՀՀ դրամ, այն դեպքում, երբ վերջիններս ավելի քիչ ծանրաբեռնվածություն ունեն, քան բուժքույրերը:

Կախված դրույքի չափից՝ որոշված է բուժքրոջ աշխատանքային ժամերը: 0,5 դրույք ծանրաբեռնվածություն ունեցող բուժքույրն ամեն օր աշխատում է 4 ժամ, շաբաթական՝ 5 օր, 0,75 դրույք ծանրաբեռնվածության դեպքում՝ 5-6 ժամ, 1 դրույքի դեպքում՝ 8 ժամ, այսինքն այնքան, որքան աշխատում է մանկապարտեզը:

«Մենք այլեւս ֆիզիկապես չենք հասցնում համավարակի այս օրերին օրական երկու անգամ ջերմաչափել 108 երեխայի, գրառումներ կատարել մատյաններում, հասցնել կատարել ամեն ինչ կարճ ժամանակում: Կառավարությանը խնդրում ենք վերանայել հաստիքացուցակը եւ բոլոր մանկապարտեզներին, անկախ խմբերի քանակից, հատկացնել մեկ դրույքով բուժքրոջ հաստիք», -ասել էին բուժքույրերը:

Անի Մկրտչյան

ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հայտարարությունը Ուկրաինայի նկատմամբ սպուտինյան վարչակազմի սանձազերծած ագրեսիայի վերաբերյալ

27 February, 2022 16:02

Ինքնիշխան, անկախ, ժողովրդավարական Ուկրաինայի նկատմամբ Վլադիմիր Պուտինի կողմից սանձազերծած լայնամասշտաբ, արյունաբեր պատերազմը հանցագործություն է, ինչպես ռազմական ճանապարհով կոնֆլիկտի լուծման ցանկացած այլ փորձ:

Անտեսելով միջազգային կառույցների և պետությունների ջանքերը՝ դիվանագիտական միջոցներով լուծելու գոյություն ունեցող խնդիրները, անտեսելով ոչ մի հիմնավորում չունեցող հարձակման, պատերազմի կանխաման նուղված առաջարկներն ու փորձերը՝ Վ. Պուտինի հրապարակային սպառնալիքները, ագրեսիվ հռետորաբանությունը և ռազմական գործողություններ իրականացնելուն ուղղված հրամանները հանգեցրել են մի իրավիճակի, որն իր հետևանքներով աննախադեպ է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մարդկային քաղաքակրթության պատմության ողջ ընթացքում:

Ռուսաստանի գործողությունները որևէ ընդհանրություն չունեն ցանկացած իրավական պետության նորմերի և արժեքների հետ: Ավելին, Վ. Պուտինն իր սանձազերծած պատերազմով մարտահրավեր է նետում ողջ մարդկային քաղաքակրթության գոյությանը:

Մեզ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին համար առավել քան ակնառու են պատերազմի միջոցով որևէ խնդրի լուծման դառը հետևանքները, որոնց առնչվեցինք 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ալիևի վարչակազմի սանձազերծած 44-օրյա պատերազմի ընթացքում:

Հաշվի առնելով հնարավոր և իրական ռիսկերը՝ ներքաշելու Հայաստանի Հանրապետությանը Ուկրաինայի նկատմամբ ագրեսիվ պատերազմին, մենք՝ ներքոնշյալ կազմակերպություններս և անհատներս, հրապարակավ պահանջում ենք ՀՀ Կառավարությունից ոչ միայն դատապարտել Ուկրաինայի նկատմամբ սանձազերծած պատերազմը պուտինյան ռեժիմի կողմից, այլև կանխել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ներքաշումը այդ հակամարդկային և հակաքաղաքակրթական հանցավոր արկածախնդրության մեջ:

Հայաստանի Հանրապետության իշխանությունները պարտավոր են հետևողական լինել և ելնել իրենց կողմից բազմիցս հնչեցրած սկզբունքից, որ ցանկացած խնդիր պետք է լուծվի միմիայն խաղաղ ճանապարհով, և ոչ թե ուժի կիրառման սպառնալիքի ու պատերազմի միջոցով:

Միաժամանակ ՀՀ իշխանություններից պահանջում ենք անհրաժեշտ ջանքեր կիրառել՝ պատերազմական գործողություններից տուժած քաղաքացիներին մարդասիրական օգնություն տրամադրելու համար:

Հայտարարությանը միանալու համար խնդրում ենք լրացնել Ձեր տվյալները՝ [այստեղ](#)

1. Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
2. «Ասպարեզ» լրագրողների ակումբ
3. Կանանց իրավունքների տուն
4. Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն ՀԿ
5. Խաղաղության երկխոսություն ՀԿ
6. Հելսինկյան ասոցիացիա իրավապաշտպան ՀԿ
7. «Ազատ քաղաքացի» քաղաքացիական նախաձեռնությունների աջակցման կենտրոն ՀԿ
8. Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ
9. «Ռեստարտ Գյումրի» նախաձեռնությունների կենտրոն ՀԿ
10. Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ
11. Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ
12. Փինք իրավապաշտպան ՀԿ
13. Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կռալիցիա
14. Հայաստանի կինոգետների և կինոլրագրողների ասոցիացիա
15. Հանրային լրագրության ակումբ

- 16. Հանուն հավասար իրավունքների կրթական կենտրոն ՀԿ
- 17. Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն
- 18. Գայանե Շագոյան
- 19. Գագիկ Բաբախանյան, հոգեբույժ
- 20. ՏԻՐ ՄԵՂԻԱ
- 21. ԴԻԱՍԵՐՎ ՄՊԸ
- 22. Վարդան Համբարձումյան, ՀՀ քաղաքացի

Ուկրաինայի դեմ Ռուսաստանի պատերազմի վերաբերյալ Քաղաքացիական համերաշխության պլատֆորմի անդամների հայտարարությունը
[27 February, 2022 16:02](#)



Մենք՝ **Քաղաքացիական հասարակության պլատֆորմի** անդամներս, որը ԵԱՀԿ տարածաշրջանի երկրների քաղհասարակության կազմակերպությունների միջազգային կոալիցիա է, խստագույնս դատապարտում ենք Ուկրաինայի դեմ Ռուսաստանի ագրեսիան և կոչ ենք անում ԵԱՀԿ գործադիր մարմիններին և ԵԱՀԿ բոլոր մասնակից պետություններին գործուն քայլեր ձեռնարկել Ռուսաստանի՝ Ուկրաինա ներխուժման դատապարտման առումով. ներխուժում, որ Մինսկի համաձայնագրերի, ԵԱՀԿ հանձնառությունների, Եվրոպայի խորհրդի, ՄԱԿ-ի պարտավորությունների և բազմաթիվ միջազգային նորմերի կոպիտ խախտում է: Եվրոպայի և ողջ աշխարհի ապագան վտանգված է, և անհրաժեշտ է միասնական, անհապաղ և ուժեղ արձագանք:

Շնորհակալություն ենք հայտնում ԵԱՀԿ ղեկավարությանն ու մասնակից երկրներին՝ Ռուսաստանի՝ Ուկրաինա ներխուժումը դատապարտելու համար: 2022 թ. -ի փետրվարի 24-ին ԵԱՀԿ գործող նախագահ Զբիգնև Ռաուն և ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Հելգա Մարիա Շմիդը հայտարարել են.

«Մենք խստորեն դատապարտում ենք Ռուսաստանի ռազմական գործողություններն Ուկրաինայի դեմ: Ուկրաինայի վրա այս հարձակումը լուրջ վտանգի տակ է դնում միլիոնավոր կյանքեր, այն միջազգային իրավունքի և Ռուսաստանի հանձնառությունների կոպիտ խախտում է: Կոչ ենք անում անհապաղ դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները»:
 2022թ. -ի փետրվարի 22-ին Վիեննայում ԵԱՀԿ մշտական խորհրդի առջև ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Վենդի Շերմանը հայտարարել է.

«Նախագահ Պոտինը փորձում է մեր միջազգային համակարգը, նա փորձում է մեր վճռականությունը: Նա ուզում է ցույց տալ, որ ուժով կարող է ֆարսի վերածել միջազգային կարգը:
Այս պահին ոչ ոք, մեզինք ոչ մեկը չի կարող մնալ չեզոք: Մենք պետք է միասնական լինենք ի աջակցություն Ուկրաինայի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության, և, իրապես, ի աջակցություն բոլոր ինքնիշխան ազգերի՝ հարկադրանքի, տապալման կամ ներխուժման սպառնալիքից զերծ իրենց սեփական ուղին ընտրելու իրավունքի»:
 Վերջին երկու օրերի ընթացքում իրավիճակն արագ վատթարացել է՝ ցույց տալով Ռուսաստանի ղեկավարության հեռուն գնացող ագրեսիվ պլանները և ներխուժումը դադարեցնելու բազմաթիվ կոչերի հանդեպ արհամարհանքը: Այս ողբերգական զարգացումները պահանջում են անհապաղ և ուժեղ միջազգային գործողություններ՝ կանգնեցնելու պատերազմը: Ժամանակն է, որ բառերին փոխարինեն գործողությունները:

Մենք՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներս, չենք կարող և չենք լինի չեզոք: Ի համերաշխություն մեր ուկրաինացի գործընկերների և Ուկրաինայի ժողովրդի՝ ԵԱՀԿ մասնակից երկրներին և բոլոր այլ շահագրգիռ երկրներին ենք ներկայացնում մեր հետևյալ պահանջները:

1. Ռուսաստանի դեմ առավելագույն տնտեսական պատժամիջոցների անհապաղ սահմանում, երկրի՝ SWIFT-ից անջատում և առևտրի ընդհանուր էմբարգո;
2. Ռուսաստանի պաշտոնյաների և նրանց ընտանիքի անդամների ակտիվների արգելափակում և ճամփորդելու արգելքների, այդ թվում՝ վիզաների մերժման անհապաղ նախաձեռնում;
3. Ռուսաստանի օլիգարխների և նրանց ընտանիքի անդամների ակտիվների արգելափակում և ճամփորդելու արգելքների, այդ թվում՝ վիզաների մերժման անհապաղ նախաձեռնում;
4. Ուկրաինային անհապաղ լայնածավալ ֆինանսական և մարդասիրական օգնության տրամադրում;
5. Աջակցություն Ուկրաինային այն ամենով, ինչն անհրաժեշտ է իր անկախությունն ու տարածքային ամբողջականությունը պահպանելու և ագրեսիային դիմակայելու համար:

Ռուսաստանի՝ Ուկրաինա ներխուժման մասին իր հայտարարության մեջ նախագահ Պուտինը սպառնաց աշխարհին՝ ի պաշտպանություն Ուկրաինայի ժողովրդի միջամտության դեպքում: Մենք չենք տրվում այս սպառնալիքին, և ոչ ոք չպետք է տրվի դրան: Դա անկարելի է: Կոչ ենք անում ԵԱՀԿ մասնակից բոլոր երկրներին շարունակել խոսել և վճռական գործել՝ ընդդեմ այս ագրեսիայի և Ուկրաինայի ինքնիշխանության խախտման: Ուկրաինայի, Եվրոպայի, և, իրապես, աշխարհի ապագան կախված է մեր սոլիդարությունից և Ռուսաստանի՝ միջազգային նորմերի և Ուկրաինայի ինքնիշխանության աննախադեպ խախտումները դատապարտելու և կանգնեցնելու ուղղությամբ ձեռնարկված հստակ քայլերից: Պատերազմը պետք է կանգնեցնել միջազգային ուժեղ, անհապաղ և միասնական գործողություններով:

Վերահաստատենք. Ռուսաստանի ագրեսիայի այս գործողությունը, չնայած ԵԱՀԿ մասնակից երկրի լինելուն, միջազգային իրավունքով ստանձնած պարտավորությունների և ԵԱՀԿ հիմնարար սկզբունքների կոպիտ խախտում է և լիովին անհամատեղելի է հենց ԵԱՀԿ-ում մասնակցության հետ:

Ի համերաշխություն Ուկրաինայի ժողովրդի,

Հայտարարությանը միացած կազմակերպությունների ցանկ.

1. Crude Accountability, USA
2. Human Rights Center “Viasna”, Belarus
3. Norwegian Helsinki Committee, Norway
4. Human Rights Club, Azerbaijan
5. The Barys Zvozkau Belarusian Human Rights House, Belarus/Lithuania
6. Netherlands Helsinki Committee, Netherlands
7. Swiss Helsinki Committee, Switzerland
8. Legal Policy Research Centre, Kazakhstan
9. Kazakhstan International Bureau for Human Rights and Rule of Law, Kazakhstan
10. Public Foundation Notabene, Tajikistan
11. Solidarus e.V., Germany
12. Citizens’ Watch, Russia
13. Center for Participation and Development, Georgia
14. The Georgian Centre for Psychosocial and Medical Rehabilitation of Torture Victims – GCRT, Georgia
15. Helsinki Committee for Human Rights in Serbia, Serbia
16. The Swedish OSCE Network, Sweden
17. DRA – German-Russian Exchange, Germany
18. International Partnership for Human Rights (IPHR), Belgium
19. Human Rights in Mental Health-FGIP, international organization
20. Albanian Helsinki Committee, Albania
21. Bir-Duino Movement, Kyrgyzstan
22. Human Rights Center Memorial, Russia

23. Bulgarian Helsinki Committee, Bulgaria
24. Centre for the Development of Democracy and Human Rights, Russia
25. Center for Civil Liberties, Ukraine
26. Libereco, Germany/Switzerland
27. Public Verdict Foundation, Russia
28. Helsinki Committee for Human Rights, North Macedonia
29. Helsinki Association for Human Rights, Armenia
30. Public Association “Dawn”, Tajikistan
31. Freedom Files, Poland
32. Helsinki Foundation for Human Rights, Poland
33. Human Rights Center ZMINA, Ukraine
34. Lawyers’ Committee for Human Rights YUCOM, Serbia
35. Helsinki Citizens’ Assembly – Vanadzor, Armenia
36. Public Association “Dignity”, Kazakhstan
37. Human Rights Monitoring Institute, Lithuania

Անգլերենից հայերեն թարգմանությունը՝ ՀՔԱԿ-ի

Այլ աղբյուրներ

Երանուհի Սողոյան

12:00, 13 փետր 2022

Գյումրիում վերսկսել են թափառող շների ստերջացման ծրագիրը

Դեռևս քարե դարում, շուրջ 12 հազար տարի առաջ, մարդու կողմից ընտելացվեց առաջին վայրի կենդանին՝ շունը: Գորշ գայլից սերող այս չորքոտանուն, որ գնահատվում է հավատարմության, տարածքն ու տիրոջը պաշտպանելու ունակության համար, քաղաքակիրթ հասարակության մի մասը ներկայում համարում է թշնամի: Խոսքը թափառող անտուն շների մասին է, որոնց, թվաքանակը կարգավորելու նպատակով, տարիներ առաջ Հայաստանում սպանդի էին ենթարկում: 2019թ.-ի սեպտեմբերի 16-ին ԱԺ-ն ընդունեց կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի քրեականացման օրինագիծը:

Օրենքի նոր փոփոխությամբ, կենդանու կյանքի ընդհատումը՝ խեղելու, մասնատելու, կախելու, հրազենով կրակելու, թունավորելու միջոցով, նաև կենդանիների մարտերի կազմակերպումը, որը կհանգեցնի կենդանու կյանքի խեղման կամ ընդհատման, պատժվում է ազատազրկմամբ 1-ից 3 տարի ժամանակով, կամ սահմանվում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի 100-500 պատիկի չափով: Օրենքի ընդունումից հետո դադարեցին կեսգիշերին կամ լուսադեմին հնչող կրակոցներն ու շների հուսակտուր կլանչոցները: Մի շարք քաղաքային համայնքներում սկսեցին իրականացնել շների ստերջացման ծրագիր: Սակայն օրենքն ի գործու չէ ստիպել մարդկանց սիրել թափառաշրջիկ չորքոտանիներին:

«Գյումրիում շները հարձակվում են մարդկանց վրա», «շները կերան մեզ», «լուծեք փողոցային շների հարցը», «Մարդիկ են կարելոր, թե՛ շները» այս եւ այլ նմանատիպ հրապարակումներն ու համացանցային քննարկումները Գյումրիում ակտիվացան հունվար ամսին: Հասարակությունը բաժանվեց երկու մասի: Կենդանասերները կոչ էին անում իրենց օրինակով կերակրել սոված կենդանիներին, որը կբերեր ագրեսիվության նվազման, իսկ կենդանատյաց հատվածը քաղաքային իշխանություններից պահանջում էր կտրուկ միջոցներ ձեռք առնել:

<https://hetq.am/hy/article/141080?fbclid=IwAR2boA78RUakjvLpvKmAgIvXoKf3XrK22amRuk6fZUmuuN-grTo5qUBrzo4#.Ygi796AZCAw.facebook>

Գյումրին Կառավարությանն է ներկայացրել 5 սուբվենցիոն ծրագրեր

գրված է Տիգրանուհի Կուրդինյան 10.02.2022 -

Այս տարվա առաջարկությունների փաթեթով՝ միայն փողոցաշինության շրջանակներում շուրջ 22 փողոց է ներառված հիմնականում քաղաքի բոլոր թաղամասերից՝ ընդհանուր առմամբ 8 կմ-ից ավելի երկարությամբ եւ 100.000 քառակուսի մետր մակերեսով: Բացի այս փողոցներից, Գյումրու համայնքապետի խոսքով, եւս 4 ծրագիր է ուղարկվել Կառավարություն: Այդ թվում է համայնքապետական բնակարանների վերանորոգման ծրագիրը, ինչի արդյունքում նախնական տվյալներով երկու տասնյակ սոցիալական բնակարաններ կտրամադրվեն քաղաքացիներին, իսկ չափորոշիչները կսահմանվեն վերանորոգումից հետո:

Ամռանը Գյումրիում տեղի կունենա գարեջրի փառատոն

գրված է [Տիգրանուհի Կուրդիյան](#) 9.02.2022 - 19:45

Գյումրիում օգոստոսի 20-ին տեղի կունենա Գարեջրի օր փառատոն: Հուշագիրը նախաձեռնող կազմակերպության եւ Գյումրու համայնքապետարանի միջեւ արդեն կնքված է 3 տարի ժամկետով: «ԷվենտՏուրա» ընկերությունը կիրականացնի փառատոնը Գյումրիում, իսկ համայնքապետարանը կգրադվի տարբեր տեխնիկական հարցերով՝ տարածքի ընտրություն, կոմունալ աշխատանքներ: Համայնքապետարանը կվճարի նաեւ համերգային ծրագրի համար:

https://tsayg.am/%d5%a1%d5%b4%d5%bc%d5%a1%d5%b6%d5%a8-%d5%a3%d5%b5%d5%b8%d6%82%d5%b4%d6%80%d5%ab%d5%b8%d6%82%d5%b4-%d5%bf%d5%a5%d5%b2%d5%ab-%d5%af%d5%b8%d6%82%d5%b6%d5%a5%d5%b6%d5%a1-%d5%a3%d5%a1%d6%80%d5%a5%d5%bb/?fbclid=IwAR3UjPqBRXsOIXqVsTY_hTFzU7_YQ3NRCLeltuXQbL4j3of9bt8LKLbhtQ4